

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ՍԱՄՎԵԼԻ

**ՀԱՅ ՀԻՆ ՎԻՊԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ
ԵՎ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

**Ժ.01.01 «Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների դոկտորի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Վազգեն Հմայակի Մաֆարյան
բանասիրական գիտությունների դոկտոր
Ալբերտ Վարազդատի Մուշեղյան
պատմական գիտությունների դոկտոր
Վրեժ Մկրտչի Վարդանյան

Առաջատար կազմակերպություն՝

**Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2014թ. նոյեմբերի 26-ին՝ ժամը 14:30-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՀ-ի գրականագիտության Օ12 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ ք. Երևան 0025, Աբովյան 52 ա, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2014 թ. հոկտեմբերի 25-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ԱԼ. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հայ դասական բանասիրության հենքի վրա ձևավորված միջազգային հայագիտությունը, չնայած իր զարգացման բարձր աստիճանին, այսօր չլուծված է թողել ելակետային այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են հայ հին վեպի և պատմության աղերսները, Մովսես Խորենացու ժամանակի, «Հայոց պատմության» աղբյուրների, բնագրի անցած ուղու և խմբագրությունների որոշարկումը: Մինչդեռ այդ խնդիրների լուծումից են կախված ոչ միայն սույն թեմային, այլև ժամանակակից այլ թեմաների հետ ուղղակի և անուղղակի առնչվող բազմաթիվ հարցերի պատասխաններ (օր. հայկական ինքնության, ոչ թե հայ ժողովրդի, ծագումը, նախամաշտոցյան օտարալեզու հայ գրականությունը, պատմահայր Մովսես Խորենացու կեղծ առեղծվածը և այլն):

Հետազոտության նպատակը և մեթոդը: Աշխատանքի նպատակն է ցույց տալ, որ պատմագրությունը Հայքում ձևավորվել է ոչ թե քրիստոնեական գրագիտության արդյունքում, այլ հայ իրականության պահանջով, հայ հին վիպական ավանդույթի հիման վրա («Մասնա ծռերի» առաջին ճյուղ, Հայկ Նահապետի և Հայկյանների վեպ, Արտաշեսի վեպ): Բացի այդ, նպատակ է դրվել թեմայի շրջանակում քննության առնել ոչ միայն չլուծված ավանդական խնդիրներ, այլև անել նոր հարցադրումներ, որոնց լիարժեք գիտական լուսաբանման համար հարկավոր է, նախ, վերականգնել քննարկման ենթակա առարկաների ու երևույթների հասարակական-քաղաքական կոնտեքստը, ապա դրանք դիտարկել տվյալ ժամանակատարածական միջավայրում ունեցած պատմա-ֆունկցիոնալ նշանակությունը վեր հանելու մեթոդով: Պատմա-ֆունկցիոնալ հետազոտման մեթոդը թույլ է տալիս բացատրել տվյալ հոգևոր-մշակութային երևույթի, ժանրի, ստեղծագործության ծագման ու նրանց հետագա պատմական ճակատագրերի հետ կապված հարցեր, ինչպես, օրինակ, Խորենացու Պատմության բնագրի պատմության հանգուցային կետերի՝ խմբագրությունների բացահայտումը:

Ատենախոսության գիտական նորությունը: Հայ հանրույթը պատմության պահանջը բավարարում էր բանավոր ժողովրդա-գուսանական վեպով, որը երկրորդ դարում հիմք դարձավ օտարալեզու, իսկ հինգերորդ դարում՝ մայրենի լեզվով պատմագրությունն ստեղծելու համար: Առաջին հայերեն գրավոր պատմությունը (Փավստոս Բուզանդ) խթանել է երկրորդի՝ այլընտրանքային պատմության ստեղծումը (Մովսես Խորենացի): Հայագիտության մեջ առաջին անգամ իրարից զատվում են Խորենացու Պատմության հեղինակային և հետագա խմբագրական շերտերը: Խորենացու այն պատմությունը, ինչ ազգովի կարդում ենք նախընթաց հազարամյակում, վերոնշյալ շերտերի համադրումն է: Ամեն մի նոր խմբագրական շերտ ներմուծվել է Պատմություն ոչ թե ի հաշիվ, այլ ի հավելումն նախորդ շերտի: Հետազոտության ողջ շարադրանքն ընթացել է բազում նորանոր գիտելիքների մշակմամբ, որոնցով ավելի հարուստ ու բազմազան է դառնում հայ հոգևոր-մշակութային զարգացման պատմությունը:

Կառուցվածքը: Ատենախոսության կազմի մեջ մտնում են՝ ներածություն, երեք մասեր՝ համապատասխան գլուխներով, որոնց բովանդակությունը տրվում է ստորև, եզրակացություններ, օգտագործված գրականության ցանկ, հավելված:

Ներածությունը շատ կարճ արժարձում է վեպի ու պատմության ընկալման, ինչպես նաև պատմության ժանրերի հետ կապված հարցեր, որոնք անհրաժեշտաբար քննարկվում են նաև աշխատանքի մեջ հարկ եղած դեպքերում:

**ՄԱՍ Ա.
ԲԱՆԱՀՅՈՒՄԱԿԱՆ ՎԵՊԸ՝ ԲԱՆԱՎՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

ԳԼՈՒԽ 1. ՎԵՊ՝ ԻՐԱԿԱՆ ՀԻՄՔՈՎ. «ՄԱՍՆԱ ԾՈՒԵՐԻ» ԱՌԱՋԻՆ ՃՅՈՒՂԸ

Հայ ժողովրդական վեպերից ամենաներկայանալի վիճակով պահպանվել է միայն «Մասնա Ծոերը», որպես իր ժանրի եզակի էթնո - մշակութային արժեք համաշխարհային հոգևոր գանձարանում:

Հայ ժողովրդական վիպարվեստի երկու խոշոր գիտակները՝ Մ. Աբեղյանը, Կ. Մելիք-Օհանջանյանը, «Մասնա Ծոեր» քառաճյուղ վեպից ընդունել են Սանասարի, Մհերի, Դավթի մասին գրույցների առանձին-առանձին գոյությունը, և որ դրանք ինքնին ավելի հին են, քան ամբողջական վեպը: Եվ էթե առաջին ճյուղի ստեղծման հիմքում ընկած է Մենեքերիմ թագավորի հայրասպան որդիների փախստյան միջադեպը, Մեծ ու Փոքր Մհերների ճյուղերի հիմքում ընկած է Միհրի առասպելը՝ բաժանված մահկանացու ու անմահ կերպարների, իսկ Դավթի ճյուղի միջուկը կազմում է արաբական հարկահանության դեմ ըմբոստացումը և օտարի լծի թոթափումը, ապա, բնական է ենթադրել վեպի բաղադրիչների ձևավորման հետևյալ ժամանակագրական հերթագայությունը. I ճյուղ՝ մ.թ.ա. VI-V դդ., II և IV ճյուղեր՝ մ.թ.ա. V-IV դդ., III ճյուղ՝ մ.թ. IX-XI դդ.: Ինչո՞ւ: Անտարակույս պետք է ընդունել, որ վեպի բաղադրիչները առանձին վիպական կյանքում ունեցել են իրենց բազում տարբերակները, որոնց հետագա դրսևորումները՝ երբեմն իրարամերձ հետքերով, կարելի է գտնել ամբողջական վեպի պատումների այս կամ այն դրվագներում:

Մասունի հիմնադրման սյուժեն Մ.Աբեղյանի և նրա բոլոր նախորդների կողմից (Գ. Սրվանձտյանց, Մ. Էմին, Գր. Խալաթյանց և այլք) կապվել է Աստվածաշնչի՝ Ասորեստանի Մենեքերիմ թագավորի հայրասպան որդիների գրույցի հետ և բնորոշվել իբրև փոխառություն¹: Խնդրի մեջ ավելի խորամուխ լինելով՝ Կ.Մելիք-Օհանջանյանը կասկածի ենթարկեց վեպի առաջին ճյուղի սյուժեի գրքային աղբյուրը. «*Այս ճյուղի առաջին գրույցները, անտարակույս, արտացոլում են աստվածաշնչյան գրույցը, որն էլ իր հերթին հանգում է բանավոր աղբյուրի*»²: Եվ նա փորձեց ցույց տալ այդ սյուժեի ձևավորման բանավոր ճանապարհը. «*Մեզ ավելի հավանական է թվում, որ այս ասուրական ավանդապատումը բանավոր ճանապարհով է տարածվել Հարավային*

¹Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ե, 1966, էջ 380-382:

²Կ. Մելիք-Օհանջանյան, Հայ ժողովրդական վիպական բանաստեղծությունը (պատմական համառոտ ակնարկ), - Մասնա Ծոեր, Հայ ժողովրդական վեպ (ընտիր պատումներ, ռուս. Թարգմ. Կ. Մելիք-Օհանջանյանի), Երևան, 2008, էջ LIV-LV:

Հայաստանում (Աղձնիք, Տարոն և Մոկս), Միջագետքի սահմանային շրջաններում, որտեղ հիմնական սեմական բնակչությունը հետագայում հայացվել է»³:

Այսինքն, Կ. Մելիք-Օհանջանյանն, ընդունելով այուժեի՝ Ասորեստանից Հայաստան ներթափանցելու բանավոր ուղին, համարում է, որ Հայաստանում «վիպասացներն ավելի են զարգացրել և վերամշակել արդեն տեղի...այուժեների և գրույցների համադրման եղանակով»⁴: Հարց է ծագում, թե մ.թ.ա. 681 թ. սեփական որդիների կողմից Ասորեստանի թագավոր Մենեքերիմի սպանության մասին լուրը («բրեքինգ նյուզ») ինչու պիտի դառնար ավանդապատում այուժե, որ հայերը ներմուծեին ու հետագայում զարգացնեին:

Երկվորյակ եղբայրների կողմից Սասունի հիմնադրման այուժեի ծագումնաբանության մի երրորդ տեսակետ ևս կա, ըստ որի, երկվորյակների առասպելության հետագա պատմականացման արդյունքում ծնվում է հայրասպան եղբայրների այուժեն⁵:

Այստեղ էլ հարց է ծագում, թե ինչու պիտի իրական եղելության մասին պատմող այուժեն ծնվեր անկախ առասպելի պատմականացման արդյունքում:

Դառնանք մ.թ.ա. 681 թ. այդ «ցնցող լուրի» հետագա արձագանքներին:

Առաջինն այդ մասին պետք է խոսեին Ասարխադդոն (Սշուր-ախսե-իդդին) թագավորի (մ.թ.ա. 680-669) արձանագիրները՝ որպես հրատապ լրատուներ (Նինվե, Բաբելոն): Ըստ այդմ, գահաժառանգի հարցով անհամաձայնություն է ընկնում Մենեքերիմ (Սինախերիբ) թագավորի (մ.թ.ա. 705-681) և նրա որդիների միջև, որի հետևանքով թագավորի ավագ որդին՝ Արադ-Նինլիլ, սպանեց հորը և տիրացավ գահին՝ հակառակ այլ կնոջից մերացուից սերված և գահաժառանգ հռչակված փոքր եղբոր՝ Ասարխադդոնի, որ Բաբելոնի փոխարքան էր: Սա գորքի ուժով կարողացավ կոտրել ավագ եղբոր և մյուս եղբայրների դիմադրությունը, գրավել Նինվեի գահը և հետապնդել եղբայրներին և նրանց կողմնակիցներին, որոնցից կարևոր էր տվյալ տարվա էպոնիմ և Մարաշի կուսակալ Նեբուսարեսերը (Նաբուշարուսուր)⁶:

Աստվածաշնչում կուսակալի անունը դարձել է Մարասար (Շարածար), Արադ-Նինլիլը՝ Ադրա Մելեք: Նրանք ներկայացվում են որպես երկու հայրասպան եղբայրներ՝ փախած դեպի RRT երկիր (Ուրարտու-Արարատի երկիր-Արմենիա)⁷: Արադ > Ադրա անցումն, ի դեպ, կարծել է տալիս, թե ինքն իրեն թագավոր հռչակած ավագ եղբայրը թագադրվել է նոր անունով՝ Արադ Մալաք:

Այսպիսով, որոշ ժամանակ անց «ցնցող լուրը» հայտնվում է Աստվածաշնչի տարբեր էջերում՝ արդեն որպես մշակված և հրեական պատմության փաստի վերածված տեղեկատվություն, ըստ որի Նինվեի տաճարում աղոթելու պահին Աստուծո պատիժն

³Նույն տեղում, էջ LIX:

⁴Նույն տեղում, էջ LVII:

⁵Նմ. Ս. Հարությունյան, Բանագիտական ակնարկներ, Երևան, 2006, էջ 137-138:

⁶Լ. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 130:

⁷Է. Մարգարյան, Բիբլիական «Արարատ երկիրը» ըստ սեպագիր արձանագրությունների և ժողովրդական ավանդությունների, - ՊԲՀ, Երևան, 2003, № 3, էջ 247-248:

իջնում է Մենեքերիմի գլխին՝ իր որդիների ձեռքով, Երուսաղեմը պաշարելու և իսրայելցիներին նեղելու պատճառով⁸:

Դիմենք ցնցող լուրը տարածող այլ տեղեկատվական աղբյուրների:

Եվսեբիոսն իր «Ժամանակագրության» մեջ (էջ 43) գրում է.

«Եւ յետ այլ ամենայն գործոց Մենեքերիմայ և զայն ևս ի նոյն հարեալ՝ ասէ, թէ ԸԺ (18) ամ եկեաց և նենգ գործեալ նմա յիւրմէ որդւոյն Արդումուզանեայ՝ վախճանէր: Ձայս Բագմավէպն»:

Քիչ անց Բագմավէպին հաջորդում է Աբյուղենոսի կարծիքը (էջ 53).

Ըստ Աբյուղենոսի, Բագմավէպի Պատմության մեջ, հետևաբար և ըստ Բերոսոսի, հայրասպան որդու անունը եղել է Ադրամելուս, իսկ ասիա, ըստ Եվսեբիոսի, Բագմավէպը հայրասպան որդուն կոչել է Արդումուզան:

«Արդամուզան»-ը ծագում է ոչ թե Եվսեբիոսի «Ժամանակագրության» հունարեն բնագրից, այլ արդյունք է հայերեն թարգմանության բնագրի գրչական աղավաղումների:

Եթե նշանավոր ցնցող լուրի հերոսները ապաստան են գտել Հայքում, ապա կարևոր է իմանալ, թե ինչ վիճակ էր տիրում Հայքում մ.թ.ա. 7-րդ դարի 70-ական թվականներին և թե ինչ էին պատմում հայերը մ.թ.ա. VI-V և հետագա դարերում:

Հայագետ-ուրարտագետներին արդեն հաջողվել է ցույց տալ, որ խնդրո առարկա պատմական պյուժեի հետ առնչվող հայոց նախարարական երկու տոհմերի՝ Արծրունիների և Գնունիների տոհմական գավառները և Սասունը գոյություն ունեին դեռևս Ուրարտուի տերության մեջ Ռուսա II-ից (մ.թ.ա. 685-645 թթ.) շատ առաջ, գուցե մ.թ.ա. X-IX դդ., որովհետև արձանագրությունը եղել է Մենուա թագավորի օրոք (մ.թ.ա. 810-786):

Դեռևս Ուրարտուի ժամանակ Արծրունիքի, Գնունիքի և Սասունի կառավարիչները կամ գերիշխող տոհմերը պետք է լինեին այդ լուրի վերարտադրողները և թարգմանողները՝ առայժմ առանց սեփական քաղաքական միտումների: Բանավոր լրատվական մեխանիզմը ենթադրում է, որ մ.թ.ա. VII-VI դդ. լրամշակման գծով առաջին նորությունը պետք է լիներ փախստականների եղբայրացումը, հաջորդ քայլը, դարձյալ ըստ բանավոր վիպարվեստի օրենքների, պետք է լիներ երկու եղբոր երկվորյակացումը, երրորդը՝ նրանց միջև անտագոնիզմի առաջացումը՝ արդեն ըստ երկվորյակների առասպելության և այլն:

Սակայն, փախստական եղբայրների պյուժեն իսկապես հայկականացվում է այն ժամանակ, երբ այդ պյուժեն դիտարկվում է իբրև հայոց պատմության փաստ. այսինքն, Հայաստանում ապաստանած եղբայրներից իբր սերվում են հիշյալ հայկական գավառների նախարարական տոհմերը:

«Սասնա Շոեր» ժողովրդական վեպի I ճյուղի, Գնունեաց և Արծրունեաց տոհմական ծագումնաբանական լեգենդների ձևավորման աղբյուրը եղել է ոչ թե Ս. Գիրքը կամ միջագետյան բանավոր ավանդույթը, այլ մ.թ.ա. 681 թ. իրական –

⁸Թագ. IV, գլ. ԺԹ, 35-37, Եսայի, ԼԷ, 36-38, Մնացորդաց, II, գլ. ԼԲ, 21-22, նաև՝ Հովսեփ Փլավիոս, Հրեական հնություններ, գիրք X, գլ. 1-2:

պատմական դեպքը՝ ժամանակի «ցնցող լուրը» Ասորեստանի թագավոր Սենեքերիմի սպանության և հանցագործների փախստյան մասին:

ԳԼՈՒԽ 2. «ՍԱՄՆԱ ԾՌԵՐ» ՎԵՊԻ ՍՏԵՂԾԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Երեք անկախ և առանձին վիպական զրույցների միավորման համար կարևոր դեր են խաղացել նրանց հերոսների արտաքին ֆիզիկական խոշոր չափերը, վիպական ժամանակի և տարածության ընդհանրությունը, նրանց «պատմականացումը» և ժողովրդական ընկալումը՝ որպես սկզբնաբանական պատմություն:

Ժողովրդական հայացքով, «պատմություն» կոչվածը ոչ թե այն է, ինչ իրականում եղել է, կամ ինչ ասում է ականատեսը, այլ այն է, ինչը հանգեցնում է «սկզբի» բացահայտմանը, հետևաբար այն է, ինչը պարունակում է «ստուգաբանություն»: Ասենք, օրինակ, Սանասարի իրական փախստյան և Սասունում ապաստանելու և այնտեղ իր ընտանիքն ու տոհմն արմատավորելու մասին ողջ հավաստի տեղեկատվությունը պատմություն չէր ընկալվի, եթե Սանասարը չդառնար Սանասուն - Սասունի էպոսին, այսինքն, եթե այդ տեղանունը չստուգաբանվեր Սանասարի անունով:

Բանահյուսական ինքնուրույն ծագում և ուղի ունեցած վիպական-ավանդական երեք պատմություններ՝ ժանրային տարբեր ակունքներով, համապատասխան պատվերի դեպքում կարող էին Սասունում հարակցվել ու մի ամբողջություն կազմել XI-XII դդ., երբ Սասուն-Sարոն շրջանը Թոռնիկ Մամիկոնյանի և իւր հաջորդների օրոք ներկայանում էր իբրև մի վարչա-քաղաքական միավոր՝ հսկված հարաբերական անկախ իշխանապետության: Ուրեմն երեք վեպերի հարակցումը և ամբողջական վեպի ձևավորումը՝ իբրև Սասնա միասնական իշխանության հիմնադրման և Սասունի պայքարի «արբազան» պատմություն, եղել է վերոնշյալ տեղական իշխանապետության գաղափարախոսական պատվերը ի հիմնավորումն իր իսկ «օրինականության»: Այստեղ պետք է իբրև բանավոր վիպարվեստի կարևոր սկզբունք շեշտել այն, որ երեք և ավելի ինքնուրույն պատմվող վիպական զրույցներից մեկ ամբողջական վեպ «մոնտաժելը» ոչ թե կոլեկտիվ վիպասանական տարերքի, այլ գուսանական-հեղինակային գիտակցության ծնունդ է, ինչը և ենթադրում է «ծրագրային» պատվեր⁹:

Առաջին ճյուղում երկվորյակ մանուկների և իրենց հոր (կամ հերացուի) միջև եղած թշնամանքի պատճառը կրոնական է. հայրը ցանկանում է նրանց զոհաբերել իր կուռքին, իսկ երեխաները հայուհի մոր գծով դիտվում են խաչապաշտ և, սպանելով իրենց «զոհաբերողին», փախչում են Սասուն՝ առանց իմանալու, որ դա Հայաստանում է: Այնտեղ հիմնելով Սասնա բերդը և սկզբնավորելով իշխող ընտանիքը՝ Սանասարը լուծում է իր գերխնդիրը և ավարտում իր վիպական դերը:

Այսինքն, առաջին ճյուղում գլխավոր հերոսի վիպական սխրանքը, նրա կենսական գերխնդիրը սեփական գլուխը փրկելն ու «ես»-ը պաշտպանելն է, որի արդյունքը լինում է Սասունի և նրա իշխող ընտանիքի սկզբնավորումը: Վիպական

⁹Ի դեպ, դա, որքան էլ սպասելի, անիրագործելի մնաց սլավոնական բիլինաների դեպքում:

գեղագիտական տեսակետից ասած՝ առաջին ճյուղի բովանդակային կիզակետը սեփական «ես»-ի հաստատման գաղափարն է:

«Ես»-ի գաղափարն այլևս չի կրկնվում երկրորդ ճյուղում, Մեծ Միերը նման խնդիր չունի. նա հեշտորեն իր իշխանությունը տարածում է նաև հարևան տերության վրա և իր օրերն անցկացնում վայելքների մեջ: Մեծ Միերը բարոյականության խնդիր ունի. նա օտարության մեջ մոռացել է իր ընտանիքն ու Սասունը: Ու մի օր սթափվում է՝ լսելով սիրուհու խրատն իրենց արտամուսնական կապից ծնված որդուն՝ Սարա Մելիքին. «Մըսրա օջախ կայնացրցիս, Սասնա օջախ փըճըսցիս»¹⁰: Վերադառնում է Սասուն՝ իր ընտանեկան առագաստ, բայց պարզվում է, որ կնոջ երդումն անհնար է դարձնում նրանց ամուսնական համատեղ կյանքը: «Կնիկ էսաց. Տու գաս իմ գողվենք, Աստված մի գավակ ըմ տա, Իս էլ, տու էլ տը մեռնինք, Մեր տղն տը կենա վըր ցըղին»¹¹: Անձնագոհաբար որդեծնության հասնելը նշանակում է, որ երկրորդ ճյուղի հերոսի գերխնդիրը սեփական տոհմի հաստատումն է:

Գուսանական գեղագիտության տեսակետից Մեծ Միերի հակառակորդը ներքին թշնամին է՝ անբարո «ես»-ը, որին կարելի է հաղթահարել միայն բարոյական սխրանքով: Ահա, թե ինչու է Միհրի կերպարը երկատվել և վեպը չորսճյուղանի դարձել:

Երրորդ ճյուղի հերոսը, թեկուզև անցնում է մանկության ու պատանեկության միջով, չունի ոչ անձնային, ոչ էլ տոհմային ինքնությունը հաստատելու նպատակ: Նրա վիպական գերխնդիրը լինելու է ավելի բարդ ու նշանակալի: Նա պետք է պաշտպանի ոչ միայն իրեն ու իր տոհմը, այլև ողջ Սասունն ու սասունցիներին: Ներդաշնորեն, որպես նախապես ծրագրված գործելակերպի տեր անհատ, նա իր ուժն ու ոգին լարում է դեպի բարձրագույն սխրանքը՝ Սասնա ժողովրդի և հայրենիքի հաստատումը:

Ահա՛ ժողովրդական վեպի գեղարվեստական զարգացման մի բարձրակետ, որին չէին հասել նախորդ ճյուղերի հերոսները: Կարող է թվալ, թե այսբանից հետո վեպի շարունակումը գեղագիտորեն անիմաստ է, որովհետև հայրենիքի հաստատումից ավելի վեհ ու գրավիչ գաղափար չլինելու դեպքում վեպը կարող է թուլանալ և անհրապույր դառնալ:

Բայց ժողովրդական գեղագիտական իդեալն, այնուամենայնիվ, կապված է մարդկության ու մարդկայնության գաղափարի ու նրա ջատագով Փոքր Միերի հետ: Դրա համար էլ վեպի գերնպատակը դրսևորվում է վերջին ճյուղում, որի հերոսն էլ դառնում է հավերժ մարդկային իդեալների կրողն ու անմահ սպասողը, չնայած գրականագիտության մեջ հարուցել է շատերի տարակուսանքն ու հակասական գնահատականները:

Վիպական ժամանակների լրման-անցման հետ Փոքր Միերի ու նրա մարդկային չափանիշների համար այլևս հող չկար: Ասպարեզ էր իջել նորին մեծություն փոքր մարդը, որը ոչ թե ուժով, այլ խելքով էր ապրում: Փոքր Միերը էպիկական ժամանակների վերջին «մոհիկաններին» ճանապարհելուց հետո մնաց միայնակ ու անմահ՝ փոքր մարդկանց շրջապատում: Ամենուրեք նա տեսնում էր հոռի բարքեր, վատաբարո դեմքեր,

¹⁰Սասնա Ծռեր, նշվ. աշխ., էջ 220:

¹¹Նույն տեղում, էջ 76:

խեղված ու խաղված հոգիներ ու մարմիններ, մանրմունք կրքեր, ստորածին բնագղներ, նենգ դավեր ու խարդավանքներ և էլ ինչեր, որ ի գորու էր ծնել մարդկային խելքը: Չսիրեց ու չներեց այդ ամենը Փոքր Միերը, փորձեց կանխել, արգելել, հանուն իդեալ-անցյալի սկսեց կոտորել աջ ու ձախ, վերացնել՝ որը պատահի, ինչ պատահի, արդեն առանց պատճառի, առանց առթի: Իր նախնիների մեջ ամենահզորին ու ամենահսկային բաժին էր ընկել ամենասարսափելի թշնամին՝ փոքր մարդուկը, որովհետև վերջինս անվերջ էր, սպառնալիորեն անսպառ: Եվ առաջին անգամ պարտվում է Մասնա Ծուռը, տանուլ է տալիս իր կռիվը: Հետևաբար նրա մեջ կասկածի պես հառնում է մեղքի ու արդարության խնդիրը, խնդրում է աստծուն, որ «կամ կռիվ մի տա իրեն, կամ իրեն ամանաթ առնի»: Ու երբ հրեշտակների հետ կռվում ինքն անպարտ է մնում, պարզվում է, որ ինքն արդար, բայց ավելորդ է. հողն իրեն չի տանում: Այցելում է ծնողների գերեզմանին՝ խորհուրդ առնելու. «Բոլ է ման գաս վեր աշխարհքին, բոլ է ման գաս, քո տեղ Ագռավը քարն է, գնա Ագռավու քար»:

Ամնահ ու անժառանգ Միերը հասնում է Ագռավաքար: Հանձնում մեղքի ու արդարության նժարին. «Կայնի իմ թուր զարնեմ էս քարին»: Քարը բացվում է, Միերին ու ձիուն ներս է առնում ու այդուհետ կոչվում Միերի դուռ: Նա պետք է սպասի այնքան, մինչև նորից վերագտնի արդարության իր իդեալը, ուստի նա պետք է քարայրում հավերժորեն սպասի:

Ահա՛ «Մասնա Ծոռի» հուժկու ավարտը, որն ազդարարում է մեծ էպիկական հերոսի ողբերգական պարտությունը հանուն մարդկայնության գաղափարի հաստատման:

Մարդկայնության գաղափարի հաստատմանը հասնելու համար ժողովրդական երևակայությունը կերտել է պայմանական գեղարվեստական մի հակադրություն Փոքր Միերի և փոքր մարդու միջև, որտեղ հաղթող է դուրս գալիս ոչ թե բարի հերոսը՝ խիստ ու դաժան կերպարանքով, այլ չար մարդուկը՝ մեղմ ու անմեղ կերպարանքով: Մա մի զարմանալի, գերերևակայական, ինչ-որ տեղ կառնավալային-բարեկենդանային հակադրապատկեր է, որ կարող էր գծել միայն ժողովրդական ասացողական հանճարը:

Այսպիսով, հերոս-հակահերոս զույգերի բնութագրերը բոլոր ճյուղերում հաստատում են շեշտված գաղափարները հետևյալ հերթականությամբ. «Էս»-ի հաստատում, տոհմի հաստատում, հայրենիքի հաստատում, մարդկայնության հաստատում: Կամ, փիլիսոփայական լեզվով ասած, անձի ինքնություն, տոհմային ինքնություն, ազգային ինքնություն, մարդկային ինքնություն:

Հերթականորեն արված այս թվարկումն ակնառու է դարձնում, որ վեպի չորս ճյուղերում, կարծես, ծավալվում է մի ընդհանրական հերոսի՝ Օուռ-ի զարգացումը կյանքի չորս տարիքային փուլերում. երեխայություն (երբ անձի մեջ տիրապետողը ինքնապահպանման բնագղն է), պատանություն (երբ անձը տոգորվում է տոհմասիրական գաղափարով), երիտասարդություն (հայրենասիրության բուռն շրջանը) և ծերություն (մարդկայնության վերջնագաղափարին հանգելը):

Ասվածը շատ հետաքրքրական է դիտվում մարդու տարիքային չորս փուլերի վերաբերյալ միջնադարյան Հայաստանում եղած կարծիքի համեմատ: Դեռևս մ.թ. IV դ. Գրիգոր Լուսավորիչն իր «Ճառք Յաճախապատումք» ժողովածուի մեջ խոսում է այդ չորս

փուլերի մասին, ինչը յուրովի վերարտադրում է, երևի ոչ առանց Գրիգոր Լուսավորչի ազդեցության, նաև Գրիգոր Տաթևացին:

ԳԼՈՒԽ 3. ՎԵՊ՝ ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆ ՀԻՄՔՈՎ. ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏԻ ԱՎԱՆԴԱՊԱՏՈՒՄԸ

Թե՛ «հեթանոս» Մարաբ Մծուրնացին, թե՛ քրիստոնյա պատմիչները (Փավստոս, Խորենացի, Սեբեոս) և թե՛ այդ դարերի հայ հանրային Հայկ Նահապետի պատմությունը ընկալել են միանման՝ իբրև հայ ազգի ծագման ստույգ պատմություն, որն արդարացնում է այդ ծագման շուրջ եղած ժողովրդական պատումները (և ոչ թե պատումներն են արդարացնում այդ ծագումը):

Հայկի պատմության միջուկը կազմում է պատճառաբանական ժանրի ավանդությունը, որը կոչված է բացատրելու, թե ինչ է նշանակում տվյալ տեղանունը, ինչու և ում կողմից է բնակավայրը տվյալ անունով կոչվել: Եթե անգամ նրա հորինողը լինի մի հայտնի անհատ, հռչակավոր հեղինակ, գրագետ իշխան կամ գյուղական ուսուցիչ և այլն, այն շուտով դառնում է անանուն, անհեղինակ, որովհետև ստեղծվել է ժողովրդական ստուգաբանության մեթոդով, հետևաբար արվել է բոլորի նմանողությամբ, բոլորի անունից՝ իբրև համայնքի կողմից բնականաբար ենթադրելի ու ընդունելի բացատրություն իր իսկ անվան:

Հայկ Նահապետի պատմության ժողովրդական ընկալմանը տրամագծորեն հակառակ է նրա գիտական ընկալումը, որի համաձայն գործ ունենք մի հնադարյան առասպելի հետ, որը Խորենացու մշակմամբ պատմականացվել է, և որի գլխավոր հերոսը՝ Հայկը, ի շարս մյուս հերոսների, նույնպես եղել է Հին Հայաստանի աստվածներից մեկը:

Եթե Հայկը բխում է «հայ»-ից, ապա այն համապատասխանում է նախահոր անվանադրման դասական սխեմային (հմմ. Արմենիա>Արմեն, Թրակիա>Թրաս, Քարթլի>Քարթլոս): Եթե «հայ»-ը բխում է «Հայկից»-ից, ապա ստացվում է Հայկ աստված, որի անունն է առել նրան պաշտող ժողովուրդը (հմմ. Աշշուր>Ասորեստան), իսկ եթե «հայ»-ը այլ ծագում ունի, որի համար կան շատ լեզվաբանական վարկածներ¹², ապա «Հայկ»-ը մնում է կամ աստված, որի անունը պատահական է նմանվել «հայ»-ին կամ էլ բխեցվել է «հայ»-ից հետագայում, ուստի կդառնա նախահայր, ինչպես ասվեց, և ոչ թե աստվածահայր կամ արարիչ:

Ըստ այդմ՝ պարտադիր չէ, որ Հայկ Նահապետի պատմությունն ընկալվի կամ իբրև պատմականացված առասպել, կամ իբրև առասպելականացված պատմություն (Մ. Աբեղյան, Գ. Սարգսյան, Ա. Պետրոսյան և այլք): Կա նաև երրորդ ճանապարհը, այն պետք է ընկալել իբրև վիպականացած պատճառաբանական ավանդապատում՝ հար և նման «Մասնա ծոեր» վեպի առաջին ճյուղին, որի հիմքում ևս ընկած է մականվանական ավանդապատում Սանատուն - Սասունի հիմնադիր Սանասարի մասին: Տարբերությունն այն է, որ եթե Սասնա էպոնիմն ունի պատմական եկվոր նախատիպ և անունը հարմարեցված է Սասունին, իսկ Սասնա ծոերի հոյարարքների մասին պատմող

¹² Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն (նախագրային շրջան), Երևան, 1987, էջ 279-292:

վիպաշարի ստեղծման մեջ Մասնա իշխանական վերնախավի պատվերով գործող գուսաններից գատ աշխույժ դեր են խաղացել նաև ժողովրդական ասացողները, ապա Հայկ Նահապետը չունի պատմական կամ առասպելական նախատիպ, իր անունը բխեցված է «հայից», իսկ նրա սերնդաբանական պատմության մեջ գլխավոր դերը պատկանել է պետության վերնախավի (արքունիքի) պատվերով գործող, գուցե, քուրմ-հեղինակին, հետո անցել է գուսաններին, ինչպես նշում է Մարաբ Մծուրնացին Արամի առասպելը պատմելուց հետո. «... *ի փոքունց ոմանց և յաննշանից արանց ի գուսանականէն այս գտանի ժողովեալ ի դիւանի արքունեաց*»¹³:

Հայկի պատմության մեջ ներառված են երկու առանձին անվանաբանական ավանդապատումներ: Վերլուծենք պատճառաբանական երկու ավանդության միջուկները՝ անջատելով Բելի դեմ կովի համատեքստից:

Հայկ անունով մի մարդ, ինչ-որ պատճառով չկամենալով իր բնօրրանում ապրել, իր գերդաստանով մեկնում է այլ տեղ, ուր հիմնում է նոր բնակավայր՝ անվանելով Հայկաշեն, իսկ գավառը կոչում է Հարք, որ ցույց տա, թե այնտեղ հայրեր են ապրել:

Ահա և երկրորդ ավանդապատումը. Հայկ անունով մի մարդ, ինչ-որ պատճառով չկամենալով իր բնօրրանում ապրել, գերդաստանով մեկնում է այլ տեղ, ուր մի հովտում հիմնում է նոր բնակավայր՝ անվանելով Հայք (Խեք), իսկ հովիտը (գավառը) կոչում է Հայոց ձոր, որ ցույց տա, թե այն պատկանել է հայերին (կամ՝ այնտեղ հայեր են ապրել):

Այս փոքրիկ սյուժեն վերացարկելու դեպքում կստանանք վերաբնակեցման ու նոր բնակավայրի հիմնադրման ընդհանրական սյուժետային հայտնի սխեման. ինչ-որ մեկը ինչ-որ պատճառով գաղթում է իր հայրենիքից և ինչ-որ տեղ նոր բնակավայր հիմնում՝ հատկանշական անվանումով:

Ամենակարգից Հայկաշենի և Հայք-Խեքի համայնքներին պարզ էր, որ իրենց ավանները, իրարից անկախ, շինել է ոմն Հայկ, բայց պարզ չէր, որ նա հիմնելու է նաև ողջ Հայաստանը:

Մբ. Գրքի ազդեցությամբ կամ նրանից անկախ հին աշխարհում, գոնե վերջին հազարամյակում (մ.թ.ա. V դ. - մ.թ. V դ.) մտավորականները կամ ուսյալներն ազգերի նախահայրերին անվանում էին տվյալ ազգի անունով: Հայերը ևս, ինքնանվանումից ելնելով, իրենց նախահորը կոչում էին Հայիկ և ոչ թե Հայ, ինչպես պարսիկ, հնդիկ, ռուզիկ (ռուս), վոշիկ, պաղիկ (եան), սագզիկ (սկյութ), խափշիկ և այլն: *-Իկ* ածանցը պետք է համարել հնդեվրոպական մայր լեզվից ժառանգություն՝ դատելով պատկանելություն ցույց տվող իմաստից. էթնիկ, պոետիկ, անտիկ և այլն: Պատկանելության ցուցիչ *-իկ* ածանցը հետագայում դուրս է մղվել «հայիկ» բառից, բայց իր հետքը թողել «հայկական» ձևում, ինչպես *պարսկական, հնդկական*: Մինչդեռ սպասելի էր *հայ-հայական, ինչպես ռուս-ռուսական, հույն-հունական* և այլն:

Առնվազն տարօրինակ պետք է համարել այն փաստը, որ հայերի համատարած բնակության երկրում՝ Հայքում, ավանները կոչվել են Հայ[իկ]աշեն, Հայք (Խեք) և «Հայոց ձոր»: Նշանակում է, պետք է ենթադրել մի գերակա այլէթնիկ միջավայր, որտեղ իմաստ

¹³ Մ. Խորենացի, Ա, ԺԴ: Հմմ. Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 38:

կունենար շեշտել բնակավայրի հայկական լինելը: Միայն թե տվյալ հայկական բնակավայրի անվանումը, որպես կանոն, պետք է լիներ գերակշռող էթնոսի (անունը դնողի) լեզվով: Ըստ ամենայնի կարելի է հնարավոր համարել, որ Հարքի և Հայոց ձորի անմիջական հարևանները ամենաուշը մ.թ.ա. VIII-VII դդ. եղել են ուրարտացիները: Հետևաբար տվյալ ազգի կամ տարածաշրջանում ընդունված միջազգային լեզվով պետք է հնչեին Հայք-Խեք, Հայոց ձոր և Հայ[իկ]աշեն անունները, որոնք հետո պիտի թարգմանվեին հայերեն կամ փոխվեին այլ տեղանունի:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏԻ ՎԵՊԻ ՍՅՈՒԺԵՏԱԲԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ինչ-որ փուլում Հայկաշենի և Հայքի անվանադիր Հայկ-Հայիկը ստանձնում է նաև ամբողջ երկրի ու ժողովրդի էպոնիմը լինելու դերը, որի համար առաջին քայլեր պիտի համարել Հարք և Հայոց ձոր գավառների ներառումը անվանաբանության մեջ: Դրա համար նրա սյուժեն ներառում է նաև մի շարք տեղական ու գավառային անվանաբանական ավանդություններ, ինչպես, օրինակ, Կադմեայ տան, Գերեզմանակքի, Երասիսի, Շիրակի և այլն, իսկ նրանց անվանադիրները դառնում են Հայիկ-Հայկի ժառանգները. որդի, թոռ, ծոռ և այլն: Այսինքն, սյուժեն ձեռք է բերում այնպիսի մի կառուցվածք, որ կարելի է անվերջ շարունակել և ընդգրկել ողջ հայկական լեռնաշխարհը: Բայց այդպես չէ, մեզ հասած չափով սյուժեն շատ սահմանափակ ընդգրկում ունի: Եթե անգամ ընդունենք, որ Մարաբ Մծուրնացու գրառման մեջ (մ.թ. II դ. IV քառորդ) այն լայն է եղել, իսկ Մովսես Խորենացին համառոտել է (մ.թ. V դ. վերջին քառորդ), միևնույնն է, երևում է, որ Հայկ Նահապետի պատմությունը շրջանցել է այնպիսի կարևոր տարածքներ, ինչպիսիք են Աղձնիքը, Օռփքը, Փոքր Հայքը, Բարձր Հայքը, Տայքը: Ահա հենց այս սյուժետային սահմանափակ ընդգրկումն էլ մեզ հնարավորություն է տալիս որոշել, թե մտավորապես երբ են Հայկաշենի և Հայքի ավանդապատումները ձեռք բերել համահայկական նշանակություն, այլ կերպ, թե երբ է այդ միջուկների միավորման շուրջ հավաքվել հայ ժողովրդի ծագումնաբանական վեպը: Արդեն իսկ հայկական պատմական նահանգների թռուցիկ թվարկումից կարելի է ինչ-որ կապ կռահել դրանց, Աքեմենյան Պարսկաստանի հայկական սատրապության և վերջիններիս որոշ մասերն ընդգրկող պետության միջև:

Նման իրավիճակ կարելի է տեսնել մ.թ.ա. III դ.: Այդ ժամանակ հելլենիզմի տարածման ուժով ամենուրեք մոդայիկ էր դառնում ընդհանուր արարչի, մարդկության ընդհանուր նախնու և ազգերի սերնդաբանության թեման:

Մ.թ.ա. III դ. Հայքում հյուսվում է սեփական ազգաբանական պատմության վարկածը, որի կենտրոնում է հայտնվում հայերի ինքնանվանումով կոչվող նախնին՝ Հայկաշենի ավանդապատումի հերոսը. և ոչ թե Արամը, Արամանյակը, Արմենոսը, Արան, Գեղամը և այլք: Ընդհակառակը, ծագումնաբանական հայկական տարբերակում վերջիններս, անկախ նախկինում իրենց ունեցած դերերից ու ընկալումներից աստված, դյուցազն, թե հերոս, լրացնում են Հայկյան Նահապետների շարքը՝ դառնալով այս կամ այն բնակավայրի, լեռան, գետի անվանադիրը:

Հայկը, որպես սյուժետային զարգացման արդյունք, միանգամայն նոր կերպար է ու հայտնի չի եղել նախորդ դիցարանին:

Առաջին անգամ հայոց մշակույթի պատմության մեջ գտնում ենք մի դեպք, երբ հայկական «իրականության» կարգավորումը (ոչ թե արարումը) տրվում է մի նորաստեղծ հերոսի, ով սահմանում է ժամանակն՝ իր միավորներով, տարածությունն՝ իր մասերով, կյանքն՝ իր արժեքներով (ագատություն, խաղաղություն, պատմական հիշողություն), և ով իր ժառանգների մեջ է ներառում նախաերվանդյան հայկական տարբեր ցեղային աստվածներին՝ դրանով իսկ, փաստորեն, լուծում տալով պետական նոր կրոնական համակարգին հակասող ցեղաստվածությունների խնդրին:

Մովսես Խորենացու ցաքուցրիվ տեղեկություններից կարելի է կռահել, որ Մարաթ Մծուրնացու ժամանակ եղել է մի ծավալուն և հանգամանալից վեպ Հայկ Նահապետի ու նրա սերունդների մասին, իսկ Մարաթ Մծուրնացուց առաջ, ինչ խոսք, այն եղած կլիներ ավելի ճոխ ու ինֆորմատիվ: Պետական գաղափարախոսությամբ տոգորված վեպի ստեղծման համար անհրաժեշտ էր հեղինակային-խմբագրական նախաձեռնություն՝ թելադրված արքունական պատվերից:

Այսպիսով, հայկական ծագումնաբանական վեպի ամբողջացման առաջին հանգրվանում (մ.թ.ա. III դ.) հնարավոր է վեր հանել հետևյալ սյուժետաբանական պատկերը. Հայկաշենի ու Հայք-Խեքի ավանդապատում (1) + Հայոց ձորի ու Հարքի ավանդապատում(2) + տեղային և գավառային անվանաբանական ավանդություններ (3) + հորինովի անվանաբանական պատումներ (4) + պատրաստի վիպական մոտիվներ (5) + ավանդական առասպելական տարրեր (6) = Հայկ Նահապետի վեպ (7):

ՄԱՍ Բ.

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ. ՎԻՊԱԿԱՆ ԱՎԱՆԴԱՅԹԻՑ՝ ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՄՕՈՒԻՐՔ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

Մծուրքը Մեծ Հայքի մայրաքաղաքներից է՝ Տարնուի գավառում:

Մովսես Խորենացին և Սեբիոսն այդ քաղաքը չգիտեն և նրա անունը շփոթում են Մծբնի հետ: Այն, ինչ հայտնի էր Մծուրքի մասին, Խորենացին վերագրել է Մծբնին: Այսինքն, ըստ Խորենացու, Մծուրքի փոխարեն առաջին մայրաքաղաքը Արշակունիների օրոք եղել է Մծբինը, Մծուրքի երկրաշարժը եղել է Մծբին քաղաքում և նրա վերաշինողն էլ դարձել է Սանատրուկը (Խորենացի, II, գլ. ԼԶ):

Իրականում, Սանատրուկը վերաշինել է Մծուրն քաղաքը Տարնոում:

Խորենացու Մծբինը երբևէ Մծուրնի հետ չէր առնչակցվի հայագետների կողմից, եթե Սեբիոսի «Պատմության» մեջ չպահպանվեր «Նախնական Պատմության» հեղինակի անվան մյուս տարբերակը՝ Մարաթա փիլիսոփա Մծուրնացի, որից պարզ է դառնում, որ Խորենացու Մար Աբասը ոչ թե Մծբնացի, այլ Մծուրնացի է: Ճիշտ է, Սեբիոսը ևս շփոթում է երկու քաղաքները, բայց կա մի վկայություն, որ օգնում է տարբերակել Մծուրքը Մծբնից. «Յայնմ ժամանակի թագաւորեցոյց Արշակ գորդի իւր գԱրշակ Փոքր կոչեցեալ ի վերայ աշխարհիս Հայոց ի Մծբին քաղաքի» (Սեբ., էջ 53): Սրան հաջորդում է Հայոց

ասհմանների թվարկումը, որից հետո Արշակը փոքր Արշակին ուղարկում է «ի Մրծանայ ընդ յարևմուտս...» (Էջ 54), որ կարծես հուշում է, թե Արշակ Փոքրի նստավայր Մծբինը իրականում եղել է Մծուրնը: Իսկ ահա քիչ հետո հայոց և պարթևաց արքայացանկը ներկայացնելու ժամանակ Մեբիոսը գրում է. «Արդ թագաւորէ Արշակն Փոքր կոչեցեալ յամի հարիւրերորդի քսան և իններորդի թագաւորութեան Արշակայ՝ հաւր իւրոյ ի վերայ Հայաստան երկրի ի Մրծուին քաղաքի...» (Մեբ., էջ 54): Այս վկայությունը ևս հաստատում է, որ թեկուզ Մեբիոսը չի գիտակցել, բայց նրա աղբյուրի հեղինակը՝ Մարաբը, շատ լավ տարբերակել է երկու քաղաքները:

Ըստ պատմահոր տրամաբանության՝ եթե մայրաքաղաքը Մծբինն է, Նինվե գործուղվողը ասորի դայիր Մար Աբասն է, ապա պատվիրատու արքան առաջին Արշակունին է Հայքում: Որպես այդպիսին, բնական է, որ նա կամենա իմանալ երկրի նախկին տերերի պատմությունը, ճանաչի այդ երկրի իշխանների նախնյաց գործերը: Ահա, առաջինը «Պատմություն» պատվիրողի ֆունկցիան, ըստ Խորենացու, հատուկ է առաջինը գահակալողին, հետևաբար, եթե հայտնի է պատվիրատու արքայի անունը, ուրեմն հայտնի է առաջին գահակալի անունը: Հավանաբար «Հայոց նախնական պատմության» հեղինակ Մարաբ Մծուրնացու հիշատակարանային տեղեկության մեջ նշվում էր, որ իր գործի պատվիրատու-ստացողը Հայոց Վաղարշ թագավորն է, որը մինչև նոր մայրաքաղաք հիմնելը նստում էր Մծուրնում II դ. վերջերին: Սա այն Վաղարշն էր, որի օրոք հայոց գահը հռչակվեց տեղի Արշակունիների ժառանգություն, ուստի և օրինաչափորեն ծնվեց սեփական երկրի պատմությունը ունենալու պահանջ:

Փաստորեն, թե՛ Խորենացին, թե՛ Մեբիոսը Մծուրքի փոխարեն մայրաքաղաք համարելով Մծբինը՝ հակասության մեջ են ընկնում, երբ Մծբնի փոխարեն երբեմն նշում են Մծուրն:

Մծուրքի հիշատակը մնացել է ոչ միայն նրա նշանավոր քաղաքացու անվան մեջ ու Փավստոս Բուզանդի IV դպրության ԺԴ գլխում, այլև ժողովրդական վիպական ավանդույթում՝ իբրև «Մասնա Ծոերի» տեղագրությունից հայտնի Մըսըր քաղաք, Մըսրա Մեկիքի նստավայր:

ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԱԲ ՓԻԼԻՍՈՓՍ ՄՇՈՒՐՆԱՑԻՆ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Արդ, ո՞վ է Մեբիոսի Մարաբա փիլիսոփա Մծուրնացին կամ Խորենացու Մար Աբաս Կատինա Մծբնացին:

Հեղինակի անունը Մեբիոսը կիրառել է սեռական հոլովով, որի ուղղականը պետք է լինի Մարաբ փիլիսոփա Մծուրնացի:

Պատմահայրն ինքն է Մարաբ անունը վերլուծաբար մասնատել՝ ցույց տալու, որ դա կազմված է ասորերեն Մար (Տեր) և Աբա (հայր) բառերից:

Մարաբի անունով Խորենացուն հասած «Նախնական պատմությունը» եղել է հունարեն լեզվից թարգմանված, որի հետքերը երևում են թե՛ Մարաբաս, փիլիսոփա բառերից և թե՛ այլ բնագրային նշաններից (օր. Կադմոս, Տիտան, Յապետոսթե և այլն): Ասորական հետքը գալիս է Խորենացու կողմից Մծբինը Մծուրնի հետ շփոթելուց:

Հունական վերջավորությունը առանձնացնելուց հետո, երբ պարզվում է, որ հիմքում ասորերեն բառ հնարավոր չէ, մնում է անունը համարել հայկական, իսկ ավելի խորքում՝ իրանական. Մարաբ<Մերաբ<Մեհրաբ անցումներով¹⁴: Այսինքն պարզվեց, որ Խորենացու և Մեքիոսի ընդհանուր աղբյուրում եղել է նույն անձը՝ Մծուրնացի գրագիր Մարաբը: Մա եղել է, հավանաբար, արքունական դպիր, միջազգային լեզուների գիտակ և ստացել է հայոց նախնական պատմությունը գրելու պատվեր Մծուրնի արքունիքից, երբ թագավոր էր Վաղարշ II-ը:

Մ. թ. ա. IV-III դարերից սկսած՝ գրեթե ողջ հասարակությանը հրապուրել էր ազգերի ծագումնաբանության թեման, թե որ ազգը որ նահապետի որերորդ սերնդի շառավիղն էր:

Դրան նպաստեց նաև քրիստոնեության առաջացումը նրանով, որ շատ քրիստոնյա համայնքներ, իսկ հետագայում քաղաքներ ու երկրներ, կամենում էին տեսնել իրենց տեղը ազգերի ընտանիքում, ուստի կազմում էին իրենց տոհմագրությունը ի հավելումն սուրբգրային տեղեկատվության:

Իհարկե, եղած կցկտուր փաստերից ակնհայտ է դառնում, որ հունական ազգաբանական ավանդույթը բոլորովին էլ կախված չէ սուրբգրայինից, այլ գոյություն ունի նրան զուգահեռ և ինչ-որ տեղ համադրում ու համակարգում է հրեական, քաղդեական կամ այլ ծագումնաբանական տեղեկությունները: Այդ է պատճառը, որ հունական աղբյուրները երբեմն տարաձայնում են «ս. Գրքի հետ և Խորենացին ստիպված է լինում դրանք հաշտեցնել:

Պատկերավոր, բայց և կոպիտ ասած՝ հին աստվածները կամաց-կամաց վերախմաստավորվեցին որպես նախահայրեր և համրացան ազգաբանական անվանացանկերում: Փաստորեն, նոր տիպի ուսյալի ճանաչողական մեթոդաբանության հիմքում ընկած էր Եվհեմերի անունով հայտնի ուսմունքը, որի նշանավոր հետևորդներից է Մովսես Խորենացին՝ առասպելների այլաբանական իմաստների մեծագույն մեկնիչը:

Թե՛ Խորենացին, թե՛ նրա հիշատակած անձինք (Դավիթ, Գորգի, Բանան) նոր տիպի փիլիսոփաների հայ համախոհներն են վաղ դարերում: Նրանցից, իհարկե, մնացել են անորոշ փշրանքներ, բայց կա մեկը, որի շնորհիվ կարող ենք դատել նաև մյուսների մասին: Դա Մարաբ Մծուրնացի փիլիսոփան է մ. թ. II դարում:

ԳԼՈՒԽ 3. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՄԻՉ ՄԱՐԱԲԻ ԱՇԽԱՐՀԸՆԿԱԼՄԱՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԲԱՆԱԿԱՆ ՄԵԹՈՂԻ ՄԱՍԻՆ

Ամենից առաջ աչքի է զարնում, որ Մարաբ Մծուրնացին իր ազգաբանական խնդիրները դիտարկում է ընդհանուր մարդկային ծագումնաբանության դաշտում, բայց ս. Գրքից անկախ՝ վերջինիս հանդեպ դրսևորելով երեք խոշոր տարբերություն: Այս երեք

¹⁴Ճմ. Զոհրաբ և Մեհրաբ ըստ Հր. Աճառյանի, տե՛ս Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Եր., 1944, էջ 212 (Զոհրաբ=կարմիր+ջուր, կարմրափայլ), նաև՝ հ. Գ, Եր. 1946, էջ 313 (Մեհրաբ=արև+ջուր, արևափայլ):

տարբերությունների հաշտեցնողը, սակայն, Խորենացին է, և ոչ թե Մարաբ Մծուրնացին, ինչը նշանակում է, որ վերջինս ձեռքի տակ չունի Աստվածաշունչ մատյանը:

Մծուրնացու բուն մատյանը՝ հայոց նախնյաց պատմությունը, ըստ Խորենացու բառացի մեջբերման, սկսվում է այսպես. «Ահեղը և երևելիք՝ առաջինքն ի դից և աշխարհի մեծամեծ բարեաց պատճառք, որ սկիզբն աշխարհի և բազմամարդության: Եւ ի սոցանէ հատեալ գտան ազգ սկայիցն, անհեղեղք, յաղթանդամք մարմնով և վիթխարիք...» (I, Թ): Այստեղից միանշանակ պարզ է դառնում, որ հեղինակը ոչ միայն քրիստոնյա չէ, այլև կանոնավոր հեթանոս էլ չէ, որովհետև բոլոր աստվածներին համամարդկային ընդհանուր ընկալմամբ է ներկայացնում՝ ելնելով այն տրամաբանությունից, որ այն ժամանակ դեռ ազգեր և լեզուներ չկային: Իսկ երբ ամբարտավան մարդիկ հղացան աշտարակաշինության խորհուրդը, «հողմ ահագին իմն և աստուածային շնչեցեալ ի դիցն ցասմանէ՝ ցրէ զամբարտակն, և մարդկանն անլուր բարբառս իւրաքանչիւր ումեք բաշխեալ, աղմուկ շփոթի ի մէջ արկանէին: Յորոց մի էր և Յապետոսթեան Հայկ, անուանի և քաջ նախարար, կորովաձիգ և հաստաղեղն» (I, Թ): Նախ, քրիստոնյան աշխարհի մեծամեծ բարիքների պատճառ չի կարող համարել աստվածներին և չի ընդունի, որ աշտարակը փլվել է նրանց ցատումից առաջ եկած հողմից, որովհետև, ըստ քրիստոնյաների, աշխարհի և մարդկության սկիզբը դրել է միակ Արարիչ Աստված: Երկրորդ, ընդհանուր մարդկային նախնու և համամարդկային արարչի գաղափարը դեմ է կոնկրետ հեթանոսական կրոնական ուսմունքին և հատուկ է նոր տիպի փիլիսոփա ուսյալներին, ում համար ընդհանուր նախնու և ազգերի բաժանման գաղափարները համամարդկային գիտանքներ են, նոր, իսկական գիտելիքներ:

Հայտնի է, որ եվհեմերականները, որպէս մ.թ.ա. IVդ. փիլիսոփա Էվհեմերոս Մեսենացու հետևորդներ, խոր անցյալում ապրող մարդկանց հետագա մանր մարդկանցից տարբերում էին իրենց վիթխարի չափերով, ֆիզիկական տվյալներով, ձայնով, ոգով, բնույթով և այլն, դրա համար էլ աստվածացան, երբ փոխվեցին ժամանակները, այսինքն, երբ առասպելական, նախապատմական կամ էպիկական ժամանակին հաջորդեց պատմական, սոցիալական, կենցաղային ժամանակը:

Հայկի անունով երկիրը՝ Հայք, Բելի ընկած վայրը՝ Գերեզմանակք, Հայկի շինած գյուղը՝ Հայկաշեն, հայրերի ապրած տեղը՝ Հարք անվանելուց մինչև Հայկի ժառանգորդների անուններով գավառների անվանակոչումը և տեղական էպոնիմների շարքի ստեղծումը (Շարա - Շիրակ, Յուլակ - Յուլակերտ եւ այլն) գրի առնելու և դրանց հիման վրա յուրահատուկ ազգագրական պատմություն հյուսելու համար առնվազն հարկավոր է եթե ոչ ազգությամբ հայ, ապա գոնե հայախոս լինել: Այլապես օտար գիտունի համար, եթե նա չիմանար կամ վատ իմանար հայերեն, գոնե պետք է աշխատեր հայ բանահավաք՝ այդ հսկա նյութը հավաքելու և ի մի բերելու: Ասվածից պարզ հետևում է, որ Հայոց նախնական պատմության հեղինակը հայ է, որ գրել է հունարեն, իսկ ըստ Խորենացու՝ նաև ասորերեն:

Մարաբ Մծուրնացու գործը, ինչպես նշել է Խորենացին, մեծ ջանք էր պահանջում և առանց հովանավոր-պատվիրատուի գլուխ չէր գա:

Խորենացին ու Մեբիոսը Մարաբ փիլիսոփային կապում են արքունիքի հետ. առաջինը՝ ուղղակի Վաղարշակի միջոցով, երկրորդը՝ Սանատրուկի, բայց շատ

անուղղակի ձևով: Իբր թե Մանատրուկի ապարանքի ավերակներից բացվում է Տրդատի օրոք Ագաթանգեղոսի թողած արձանագրությունը մի պուննի վրա, որից էլ քաղագրել են Մարաբ Մծուրնացու աշակերտները ուսուցչի մատյանում, որտեղ էլ Սեբիոսը Միջագետքում եղած ժամանակ կարդացել է պարթև եւ հայ Արշակունիների գահացանկերը:

Խորենացին էլ է հորինում իր աղբյուրի ստեղծման պատմությունը, բայց նրա մոտ մի բան հավաստի է, որ պատվիրատուն Մծբնի (կարդա՝ Մծուրքի) արքունիքն է Վաղարշակի օրոք:

«Հայոց նախնական պատմության» նյութը խիստ հայկական է ու հասու է միայն հայախոս իմաստասերին: Այն չէր կարող թարգմանված լինել քաղղեական մատյաններից՝ հունարեն՝ Ալեքսանդր Մեծի հրամանով: Նրա իսկական աղբյուրը Արամի մասին եղած պատմությունների առիթով հայտնում է Խորենացին, առանց վարանելու, որ կարող է ինքն իրեն հակասել, և մեջբերում է Մարաբ Մծուրնացու խոսքը. «Բայց թեպետ և ոչ ի բուն մատենանն, սակայն որպես Մար Աբաս Կատինայ (կարդա՝ Մարաբ փիլիսոփա - Ա. Ս.) պատմէ՝ ի փոքունց ոմանց և յաննշանից արանց, ի գուսանականէն այս գտանի ժողովեալ ի դիւանի արքունեաց» (I, ԺԳ): Ահա՛ Մծուրնացու իսկական աղբյուրը:

Խորենացու մոտ գտնում ենք ևս մի նուրբ վկայություն, որից երևում է, որ Մարաբ Մծուրնացին Հայկի եւ Բելի պատմությունը նմանապես քաղել է բանավոր ավանդույթից. «Բսկ Նինոս թագաւորեալ ի Նինուէ՛ յիշատակ քինու գնախնւոյն իւրոյ Բելայ ունէր ի մտի, ի գրուցաց ուսեալ և զայս խորհէր հատուցանել յամս ձիգս... բառնալ, ջնջել զամենայն ճետ սերմանեալ յարանց քաջին Հայկայ» (I, ԺԳ): Իբր Նինոսը, գրույցներից լսած լինելով և մտքում պահելով Բելի պատմությունը, քինախնդիր է լինում իր նախնու համար: Այս նուրբ վկայությունն, իրոք, հոգեբանական նշանակություն ունի՝ հասկանալու, որ Մարաբ Մծուրնացու գլխավոր աղբյուրը բանավոր է, եթե ոչ անմիջականորեն իր կողմից գրառված, ապա գոնե արքունի դիվանում պահվող գրառումներից քաղված, կամ էլ ն՝ այն, և՛ այն:

Ինչպես տեսանք Աբյուդենոսի օրինակով, օտար ազգաբանական գրքերում կարող էին գտնվել ի շարս այլ ազգերի նաև հայոց նախնիների ցանկը՝ Հաբեթից մինչև Արմեն (Հայկ) կամ Արամ, այսինքն մինչև հայոց այլալեզու էպոնիմը: Սակայն այդ ցանկերում նշված նահապետների գործերի կամ նրանց ժառանգների մասին եղած տվյալներ անհնար էր գտնել օտար գրքերում, դրանք լիարժեք ապրում էին հայ ժողովրդական բանահյուսության մեջ կամ էլ մասամբ պահպանվում էին հայոց դիվանական գրառումներում: Ուրեմն պատմահայրը ճիշտ է այնքանով, որ օտար գրքերից կարելի էր քաղել հայոց նախա-նահապետների անվանացանկը, բայց ճիշտ չէ, թե այդ գրքերում գրված են նաև հայ նահապետների անուններն ու սիրանքները: Այստեղ պետք է ասել, որ պատմահայրը հենց ինքն է իրեն հերքում՝ ասելով, որ «մանաւանդ զի և ոչ պարծանք ինչ՝ նոցա և ոչ բարգաւաճանք՝ օտար ազգաց քաջութիւն և գործք արութեան» (I, ԺԳ):

Գրավոր աղբյուր գերադասելը և որևէ տեղեկատվություն, թեկուզ չնչին մասով, գրավոր աղբյուրներին առնչելը հելլենիզմի դարաշրջանի ուսյալների ընդհանուր հատկանիշ կարելի է համարել, որով և նրանք ձգտում էին ավելի հավաստի գիտելիքներ հաղորդել սահմանազատվելով սովորական քրմական կամայական

տեղեկատվությունից ու մեկնաբանություններից: Մարաբ փիլիսոփա Մծուրնացին ևս այդ ուսլալներից էր, որ դարձալ մեզ հայտնի օտարալեզու առաջին հայ պատմագիրը:

ԳԼՈՒԽ 4. ՊԱՏՄԻՉ ՄԱՐԱԲ ՄԾՈՒՐՆԱՑՈՒ ԵՐԿԻ ԾԱՎԱԼՆ ՈՒ ՎԵՐՆԱԳԻՐԸ

Բարեբախտաբար Խորենացու շնորհիվ հայտնի է նաև Մարաբ փիլիսոփայի երկի վերնագիրը՝ «Հիսուսն պատմութեան պիտոյից», որն, ինչպես կասլի ստորև, թյուրիմացաբար ընկալվել է իբրև Մարաբից անկախ աղբյուր: Խորենացու քաղագրումից պարզ երևում է, որ Մարաբ Մծուրնացու «Պատմությունը» ալելի լայն ծրագրով էր շարադրված, քան ազգաբանությունն է: Այն սկսվում է մարդկության ընդհանուր նախնիներից, ներառում է Հայկի ազգաբանությունը՝ հայոց նահապետներով, շարունակվում Տիգրան Երվանդյանով, հասնում է մինչև Արշակունիների հաստատումը նախ Իրանում, ապա Հայաստանում: Խորենացու և Սեբիոսի կատարած մարաբյան քաղվածքների համադրումը ցույց է տալիս, որ Մարաբի Պատմությունը V դ. ունեցել է մեկ թարգմանություն, բայց երկու մեկնաբանություն:

Ակնհայտ է, որ Մասիսի անվանադրման մասին եղել է երկու տարբերակ. մեկը վաղ հայկական՝ կապված Ամասիա նահապետի անվան հետ, ինչպես պատմում է Մարաբ Մծուրնացին և նրա հետևողությամբ՝ Խորենացին, մյուսը՝ Արշակունյան հետագա ժամանակի (IV դ.), որի նպատակն էր թագավորական ընտանիքի ծագումը կապել ս. Գրքի և Աբրահամի հետ՝ Մարայակ որդու միջոցով, և որը, ի տարբերություն Մարաբ Մծուրնացու, մեջբերել է երևի Փավստոսը, քանի որ այդ տարբերակը աղոտ ծանոթ է Պրոկոպիոսին: Լրիվ անհնար է, որ Մասիսի անվանադրման երկու տարբերակները բխեն Մարաբից, որովհետև դրանցից մեկն ակնհայտորեն հայկական քրիստոնեական միտում ունի, ինչը հակացուցված էր ոչ քրիստոնյա Մարաբ Մծուրնացուն:

Պրոկոպիոս Կեսարացին Մարաբ Մծուրնացու «Նախնական պատմությունից» օգտվում է Փավստոսի միջոցով: Հետևաբար, իրոք, ստացվում է Մարաբի «Պատմության» երկու մեկնաբանում՝ ըստ նրա բնագրից օգտվողների՝ Փավստոսի (I դպրություն), Խորենացու (գիրք I): Եթե 2-րդը մեզ է հասել ամբողջովին, ցավոք, առաջինը կորել է և նրա մասին դատում ենք հետագայի քաղագրումներով՝ Պրոկոպիոս Կեսարացու (VI դ.) և Սեբիոսի (VII դ.): Երկուսն էլ իրենց ձեռքի տակ չեն ունեցել Մարաբի հունարեն կամ հայերեն գիրքը:

Փավստոսից քաղված մարաբյան էջերը Սեբիոսի Պատմության մեջ, այսօր կարելի է սահմանագատել: Իսկ հավելվածը՝ պարթև և հայ Արշակունիների ցանկերով՝ իբր քաղված ազաթանգեղյան արձանագրությունից (էջ 54, տ. 21-36, էջ 55, տ. 1-5), Սեբիոսը Մարաբին չի վերագրում, այլ գատում է նրանից՝ ասելով նախաբանում. «Ձոր փոքր մի և ապա յիւրում տեղոջն տեսցես զպատճենն» (էջ 47, տ. 25-26): Մարաբը նշված էջերում հղվում է երկու անգամ այնպես, երևի ինչպես Փավստոսի մոտ է եղել. առաջինը՝ «Քանզի զայն ճառէ ժամանակագիրն (էջ 52, տ. 2), երկրորդը՝ «ասէ» (էջ 53, տ. 28): Ի տարբերություն շատ հեղինակների (Ն. Մառ, Գր. Խալաթյանց, Ստ. Մալխայանց, Ն.

Ակինյան, Ն. Ադոնց և այլն) միայն Ա. Զամինյանն է, որ նշված հղումների հասցեատեր է համարել, հիրավի, Մարաբ Մծուրնացուն¹⁵:

Իսկ թե որոնք են Խորենացու «Հայոց Պատմության» մարաբյան էջերը, վաղուց հայագիտության մեջ արժանացել են բազմակողմանի ուշադրության և նշվել են I գրքի գլուխների մեծ մասը և II գրքի սկզբներից մինչև Ժ (10) գլուխը:

Մարաբի Պատմությունից առնված հատվածների մեջ հանիրավի անտեսվել են I գրքի ԻԴ-Լ գլուխները, այն է՝ Տիգրանի և Աժդահակի վիպասանքը, որի վրա արժե հրավիրել հետազոտողների ուշադրությունը:

Խորենացին կողք կողքի է դնում Մարաբի և Կեփալիոնի պատմածները Շամիրամի մասին և առավել հավաստի համարում առաջինին, «քանզի ոճով իմն ասէ և զպատճառս պատերազմին յայտնէ» (II, ԺԸ): Բացի այդ, ըստ Խորենացու, Մարաբի պատմածը հաստատում են նաև «մեր աշխարհի առասպելները», որոնք հայտնի էին թե՛ Խորենացուն, թե՛ «Բազմահմուտ ասորի» կոչված Մարաբին: Ապա Խորենացին ԺԹ գլխում անցնում է դրանից հետո եղած նյութին՝ դարձյալ չնոռանալով իր աղբյուրաբանական սկզբունքների մասին. ոչինչ իր կողմից չի հորինում, այլ տալիս է այն, ինչ գրքից է, կամ գրքի նմանողությամբ՝ այն, ինչ «իմաստուն և այդ հարցերում քաջախոհ այրերի խոսքերից է: Այսինքն, իր շարադրանքում ինքն ուղղամիտ ու անպարտ է, իսկ թե որքանով է ուղղամիտ իր աղբյուրը՝ աստծուն է հայտնի: Բայց և այնպես ստուգելու մի չափանիշ ունի՝ երեք ազգերի ծննդաբանական ցանկերի համապատասխանությունը սերունդների թվով, որ ցույց է տալիս աշխատության հավաստի լինելը: Ապա գրում է. «... սկսայց քեզ և որ ինչ զկնի այսոցիկ ի հիւսման պատմութենէ պիտոյից» ու պատմում է Շամիրամի մահից հետո եղած անցքերը: Թռուցիկ հայացքից կարող է թվալ, թե աղբյուրը փոխվում է: Բայց Խորենացին չի զլանում մանրամասները ներկայացնել այն ժամանակ, երբ աղբյուրի մեջ հասնում է մեր բնիկ թագավորների մասին պատմող էջերին: Վասն որոյ արժան է մեզ աստանոր մեծ գործ կատարել, և բազումս ասել առարկութիւնս ճառից, զորոց մեզէն իսկ զհիւմունս (կարդա՛ զհիւմունս – Ա. Ս.) այսպիսեաց բանից ընթեռնուլ արժանավորեցաք ի չորս հազներգութիւնս, զարգասաւորին ի բանս և զիմաստնոյն իսկ, և ի մէջ իմաստնոց իմաստնագունին» (I, ԻԱ):

Այստեղ նույնանում են, իբրև միևնույն աղբյուրի բնորոշում, «հիւսումն պիտոյից» և «հիւսումն բանից» կապակցությունները, հետևաբար «արգասաւոր ի բանս» հեղինակը Մարաբ Մծուրնացին է: ԻԳ հատվածում Խորենացին Տիգրանի պատմությանը դառնալուց առաջ նույն մատյանից լրացնում է որոշ բաց թողած տեղիներ Ասորեստանի թագավոր Սենեքերիմի որդիների՝ Սանասարի և Ադրամելեքի հայրասպան լինելու և Հայք փախչելու մասին. «Ի սմանէ, ասէ պատմագիրն, լինել զԱրծրունիս և զԳնունիս»: Իսկ հատվածն ավարտվում է Անգեղ տան հիշատակումով. «Բայց զԱնգեղ տունն, ասէ նոյն պատմագիր, ի Պասքամայ ումմանէ ի Հայկայ թոռնէ լինել» (I, ԻԳ): Նույն պատմագիր կոչվածը Մարաբ Մծուրնացին է, որը շարունակում է ներկա մնալ և վկայակոչվել նաև «Տիգրան և Աժդահակ» վիպասանքի գլուխներում (ԻԴ – Լ) «ասէ», «ասացից», «երկայնեմ»,

¹⁵Աբգարյան, ծան. 37, 50: Ա. Զամինյան, ՄՄ, անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 232, վավ. 101:

«պատմի» միջարկություններով: Բոլոր դիտարկված գլուխների աղբյուրը Մարաբ Մծուրնացու «Պատմությունն» է: Ուստի, ելնելով Խորենացու անուղղակի կրկնահիշատակումից, կարելի է վերականգնել Մծուրնացու գործի վերնագիրը՝ «Հիսուսմ պատմութեան պիտոյից»: Դեռ ավելին, կարելի է նաև կռահել, որ «Պատմությունը» բաղկացած էր չորս մասից՝ հագներգությունից, որոնց, հերոսները կլինեն՝ Հայկ, Արամ, Արա գեղեցիկ, Տիգրան: Այնպես որ «Հիսուսմ պատմութեան պիտոյից» գիրքը ոչ մի կապ չունի հայտնի «Պիտոյից գրքի» հետ: Ինչու է Մարաբ Մծուրնացու պատմագրական երկը կոչվել «Հիսուսմ պատմութեան պիտոյից»: Արդեն ասվեց, որ պատմության կարգը, հյուսվածքը ոչ բոլոր տեղեկություններն է ընդգրկում, այն պատմական նյութը շարադրում է ընտրողաբար՝ զատելով պիտանին անպիտանից: Թե որն էր համարվում «պիտանի», տվյալ դարաշրջանի գեղագիտական ու բարոյագիտական հայեցակարգի հետ կապված խնդիր է: Պիտանի բաների ճանաչողությունը տարածվում էր նաև պատմագրության ոլորտում, որտեղ գործում էր պատմական պիտոյքների գեղագիտությունը: Պատմական ամեն ինչ դեռ պիտոյք չէ: Պատմակերտության արվեստը ենթադրում է ոչ միայն ոճավոր, ստուգապատում, պատճառաբանված շարադրանք, այլև բարոյակրթման ու ինքնակատարելացման նպատակներ: Խորենացին ևս դավանում էր հիշյալ ուշ հելլենիստական պատմագրական հայացքներն՝ ի տարբերություն Սեբիոսի, որը նշված «պատմակերտությունը» առանց կատարածաբանության համարում էր վարժ խուզարկուի «կամայական պիտոյքների» համար գրված պատմություն:

ԳԼՈՒԽ 5. ՄԱՐԱԲ ՄՇՈՒՐՆԱՑԻՆ՝ ՄԻԶՆՈՂԴ ԱՔՅՈՒԴԵՆՈՍԻ ԵՎ ԽՈՐԵՆԱՅՈՒ

Քննարկենք հայ դասական բանասիրության մեջ խնդրահարույց դարձած այն հարցը, թե հունական աղբյուրի օրինակով հունագիր հայ հեղինակ Մարաբ Մծուրնացին ինչպես է կազմում հայոց նահապետների ցանկը՝ այն միախառնելով հանուր մարդկության «ազգաբանության» հետ:

Ինչպես դիպուկ մեկնաբանել է Ստ. Մալխասյանը, Խորենացուն հաջողվել է, թեկուզ Ս. Գրքից շեղվելու միջոցով, Հայկին ու Բելին ժամանակով իրար մոտեցնել՝ դարձնելով համապատասխանաբար 5-րդը և 4-րդը իրենց ցանկերում, ապա և Նինոսին ու Արամին ժամանակակից դարձնել, որպեսզի հետագա պատմությանը բովանդակապես չհակասեն¹⁶:

Մարաբն աշխատում է նույն մեթոդով, ինչով Բերոսոսը, Բազմավեպը, Աբյուղենոսը և մյուս իմաստասեր «ազգաբանները»: Ինչպես սրանք են քաղդերենից հունարենի թարգմանել քաղդեական ազգաբանական պատմությունները, (Եվսեբիոսը Աբյուղենոսի երկը բնորոշում է իբրև քաղդեացիների պատմություն) և ավելացրել իրենց հայտնի ազգերի նահապետներին, այնպես էլ Մարաբն է եղած աղբյուրներին ավելացրել հայոց ազգաբանությունը: Ուսյալ հայերը, մինչև Ս. Գրքի համամարդկային կառույցում

¹⁶Մովսես Խորենացի, նշվ. աշխ., Եր., 1981, էջ 461-462:

իրենց տեղը գտնելը, պետք է տեղավորվեին եղած ավելի հին համակարգում: Դա ջրհեղեղյան և աշտարակաշինական առասպելաբանությունն էր, որի զարգացման և տարածման կենտրոնը Բաբելոնն էր: Դրա համար էլ համամարդկային սերնդաբանական և ազգաբանական ցանկերը Բաբելոնյան ծագում ունեն: Ազգաբանության ժանրը Բաբելոնից աստիճանաբար սփռվեց ամենուր և հատկապես ծաղկում ապրեց Մակեդոնյան գլոբալիզմի՝ հելլենիզմի դարաշրջանում՝ ծնելով նորանոր տեղային տարբերակներ ու հավելվածներ:

Մակայն, ի տարբերություն իր հեղինակավոր հույն նախորդների, ինչպես նաև իր ավագ ժամանակակից Աբյուդենոսի, Մարաբը չի անտեսում մանր ազգաբանությունը և կարևորում է՝ հնչեցնելով մի խոսք, որ տրամաբանորեն ու հոգեբանորեն կարող էր ասել միմիայն առաջինը «ազգաբանողը» և պատմություն գրանցողը. «Ձի թեպետ և եմք ածու փոքր, և թուով յոժ ընդ փոքու սահմանեալ, և զօրութեամբ տկար, և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի, զոր և ոչ մի ոք ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենագրել» (I. 3):

Աբյուդենոսի օրինակով երբ Մարաբը կազմում էր իր ազգաբանական անվանացանկը, առաջին հերթին պետք է ջանար, որ գուսանական բանավոր վեպում իրար հետ հակամարտող Հայկն ու Բելը, ապա և Արամն ու Նինոսը (Արայի հետ առնչությամբ թելադրված) հայտնվեն ցուցակների համապատասխան զուգահեռ դիրքերում: Եթե Բելը Նինոսից (10-րդ) վեր գրավում է 7-րդ տեղը, նշանակում է նա Քամից հետո 4-րդն է, ինչն էլ նշանակում է իր հերթին, որ Աբյուդենոսն է անուղղակիորեն հուշում՝ Հայկին համարելու գոնե Հաբեթից հետո 5-րդ սերունդ, որպեսզի դառնան իրար ժամանակակից: Այս պարագայում ենթադրվում է, որ Մարաբը հղեր Աբյուդենոսին, որպես հավաստի աղբյուրի, և թվարկեր հայոց յոթնանուն ցանկը: Իսկ սա էլ բավական է, որ նույն «պատմագրական» դպրոցի հետևորդ Խորենացին Աբյուդենոսին վերագրի նաև հայկական ցանկը, կամ Աբյուդենոսին ընկալի իբրև քաղղեականի հետ միասին նաև հայկական ազգաբանական շարքի հեղինակի:

Արդեն բազմիցս բանասերները նշել են, որ Յապետոսթե անվան մեջ ներառվել է նաև հունարենի շաղկապը (յե), որ դրվում է թվարկվող անուններից մեկից հետո՝ մի տեսակ սաստկացնելով բառից առաջ դրվող κδñ շաղկապը¹⁷: Յապետոսթեի դիմաց Խորենացին դրել է սուրբգրային ձևը՝ Յաբեթ, որով անուղղակի ցույց է տվել, որ ինքն ուշադրություն է դարձրել նշված անվանը, ուստի և անձնանունն աղավաղել է նա, ով հունարեն ձևագրից օգտվել է առանց բառանշատումի, քանի որ յե շաղկապն ընկալվել է իբրև բառի վերջնամաս: Միաժամանակ երևում է, որ այդ սխալ ընթերցման հեղինակը ոչ միայն հունագետ Խորենացին, այլև Մարաբ Մծուրնացին էլ չի կարող լինել, որովհետև նա գրել է հունարեն՝ քաղղելով Բերոսյան Սիբիլայից: Ուրեմն Յապետոս անվան կեղծ տարբերակը ծնվել է հայերեն թարգմանչի ձեռքով: Իսկ երբ Բաբելոնի աշտարակի փլուզումից մարդիկ և լեզուները խառնվել են իրար, աղմուկի մասնակիցներից մեկն էլ

¹⁷Հմմ. Մովսես Խորենացի, նշվ. աշխ., Մտ. Մալխասյանի ծնթգր., էջ 462-463, Ա. Թոփչյան, նշվ. աշխ., էջ 61:

եղել է «Յապետոսեանն Հայկ»: Այսինքն, հունարենի շաղկապը ոչ միայն դարձել է բառի վերջնամաս, այլև մասնակցում է բառի ածանցմանը, ինչը որևէ կասկած չի թողնում, որ այն չիմացության, և ոչ թե անուշադրության, արդյունք է: Եվ մի⁹ թե սա չի նշանակում, թե թարգմանիչը շարունակում է կիրառել իր «գտած» անվանաձևը նաև անկախաբար՝ Հաբեթյանի փոխարեն: Այստեղ՝ այլ փաստեր չունենալու պարագայում, մեզ հավելյալ տեղեկություն է հաղորդում հենց այն «սխալը», որի նորովի կիրառումը դառնում է բավականին «ինֆորմատիվ»: Որովհետև, եթե մինչ այդ եղած կիրառությունները հնարավոր էին Մարաբի հունարեն նախադասություններում, որպես քերականորեն օրինաչափ երևույթ՝ աղավաղված թարգմանչի կողմից, ապա այս դեպքում կիրառված ձևը չի կարող ունենալ հունարեն նախաձև, հետևաբար այն հայերեն գրել է թարգմանիչը՝ Մարաբից անկախ, հավանաբար Մարաբի հունարեն «Յապետոսածին Հայկ» անվան դիմաց, ինչպես որ հունարեն «Տիտանածին Բելը» հայերեն դարձել է՝ Տիտանեան Բել: Պետք է ընդունել, որ Մարաբի խոսքը Խորենացին է վերագրել Աբյուդենոսին, և որ մ.թ. II դ. պատմիչ հայ Մարաբ Մծուրնացու հունարեն Պատմությունը թարգմանված է եղել հայերեն V դարում անհայտ թարգմանչի կողմից:

ՄԱՍ Գ.

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԲՆԱԳՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. ԳԼԽԱԿԱՐԳԸ ԵՎ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԱՌԱՋԻՆ ԳՐՔԻ ԳԼԽԱԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՏԵՍՔԸ

Խորենացու մի շարք վկայություններ թույլ են տալիս գլխակարգի հարցը դիտարկել որպես բնագրի պատմության մի առանձին խնդիր:

Պատմության II-Ժ, ԿԶ և III-ԿԲ գլուխների վերնագրերի համադրումից երևում է, որ խմբագիրը հեղինակին նշում է III դեմքով, ինչը չէր անի հեղինակն ինքն իրեն վերաբերյալ: Պատվիրատու Սահակ Բագրատունու հետ հեռակա երկխոսելիս՝ հեղինակը միշտ I և II դեմքեր է գործածում: Նշված III դեմքը, սակայն, ոչ միայն հաստատում է խմբագրի ներկայությունը, այլև ցույց է տալիս, որ խմբագիրը չի թաքցնում իրեն ու իր դիրքորոշումը բնագրի հանդեպ, որովհետև նա իր գործը հեղինակին վերագրելու նպատակ չունի:

Խորենացու Պատմության II-ԾԹ գլխի սկզբում թվարկվում են Արտաշես թագավորի չհիշատակված մյուս գործերը, որոնք լիովին փոխարինում են վերնագրին և պարզ դարձնում, որ ներկա վերնագիրը ավելորդ է և ոչ հեղինակային:

Նույն կերպ II-Է գլուխը եթե պատմիչի կողմից վերնագրված լիներ, ապա նա սկզբից չէր ներկայացնի նրանում պատմելիք նյութերի ցանկը. “Այս դրուագ մեծ...արժանի բանից ողորկագունից... բագում ինչ աստ կարգաց եւ յօրինուածոց տանց, ազգաց, ...եւ համայն ասել՝ օրէն թագաւորութեան... եւ որ նման այսոցիկ”: Պատմիչ-հեղինակը II-Է գլուխը անվանում է “դրուագ մեծ”, որին համարժեք է նաև գլխի սկզբում տրված բովանդակային ցանկը: Բայց հիշյալ մեծ գլուխը ոչ լրիվ մեկ թերթ է՝ կիսատ բովանդակությամբ, որովհետև ցանկում նշված ինֆորմացիայի մեծ մասը հաջորդաբար

ներկայացվում է II-Ը և II-Թ գլուխներում, որոնք սկզբնազրում նախորդի հետ կազմել են մեկ ամբողջություն՝ լիովին համապատասխանելով “դրուագ մեծ” բնորոշումին: Խորենացու Պատմության գլխակարգման արդյունքում գլուխը բաժանվել է 3 /Է, Ը, Թ / անհավասար մասերի:

Դառնալով սկզբնական բնագրի խնդրին՝ նախ պետք է ճշգրտել հեղինակի տերմինաբանական հիմնակետերը:

Ըստ Խորենացու՝ իր երկը պատմություն է սկիզբների և հիշարժան գործերի մասին, որը բաժանված է երեք գրքերի, որոնք երբեմն նաև կոչվում են մատյան (II-Գ, II-Ը և այլն): Գրքերն էլ բաժանվում են գլուխների, որոնք կոչվում են երբեմն “դրուագ” (II-Է), “հանդես” (I-Թ), հագներգություն (II-ՂԲ), բան (I-ԼԱ, II-ՂԲ, I գրքի հավելված - նաև խոսք, գրույց, պատմություն իմաստով), իսկ ավելի հաճախ՝ ճառ:

Այսպիսով՝ նախնական բնագիրը ևս ունեցել է գլխաբաժանում: Բայց ինչ սկզբունքով ու չափանիշներով են առանձնացվել գլուխները:

Խորենացու Պատմության երկրորդ գրքում Հայոց Վաղարշակ թագավորի պատմության մեջ /II-Գ-Թ/ հեղինակը հերթական գլուխը բնորոշում է որպես “դրուագ մեծ եւ հաւաստի պատմութեամբ լի” / II-Է /, որը, ինչպես վերը պարզեցինք ներառել էր նաև հաջորդ երկու գլուխները /II-Ը,Թ / նրանց հետ կազմելով մեկ միասնական, իրոք, մեծ գլուխ՝ 6 էջ ծավալով¹⁸: Եթե 6-էջանոց գլուխը աչքի է զարնում որպես մեծ, ապա նույն մոտեցումով միջին մեծության գլուխը պետք է կազմեր մոտ 3-4 էջ, իսկ փոքրը՝ 2 էջ:

Երկրորդ գրքի ԾԴ գլխում պատմահայրը գրում է, թե որովհետև Արտաշեսի օրոք շատ գործեր կատարվեցին, “վասն այնորիկ ի բազում ճառս կոտորեցաք... որոյ է այս վերջին ճառս”: Իսկ այդ վերջին ճառը կազմում է մոտ 2 էջ (II-ԾԹ-Կ): Արտաշեսի ողջ պատմությունը, որ պատմիչը բազում գլուխների է կոտորակել, կազմում է մոտ 14 էջ (II-ԽԳ-ԿԱ):

Քանի՞ գլուխ հասկանալ “բազում ճառեր” ասելով: Վերջին գլխի օրինակից դատելով՝ այդ գլուխները եղել են փոքր՝ երկէջանի, ուստի և 5-7 գլուխ: Եվ իրոք, 3-4 գլուխը Խորենացին բազում չէր անվանի: Հետևելով Արտաշիսյան պատումների հարաբերական ինքնուրույնությանն ու տրամաբանական անցումներին՝ ստանում ենք վեց գլուխ՝ գլխակարգող խմբագրի 17-ի դիմաց:

Խորենացու Պատմության բոլոր գլուխների սահմանային անցումների քննությունը ցույց է տալիս, որ նախնական գլխաբաժանի դեր են ունեցել մի շարք հատկանիշներ, որոնցից կարևոր են հատկապես ծավալը, բովանդակության (թեմա, հերոս, մոտիվ) փոփոխումը, աղբյուրաբանական տեղեկանքը:

Նշված հատկանիշներին կավելանա մի կարևորը ևս՝ արտայայտժեստային հատկանիշը, եթե հաշվի առնենք այն պայմանները և աշխատանքի կազմակերպման այն եղանակը, որոնց օգնությամբ պիտի կատարվեր պատվերը: Այսպես, Հայաստանի նախարարներից մեկի՝ Սահակ Բագրատունու պատվերով ծերացած, հիվանդոտ և թարգմանություններով ծանրազբաղ Մովսեսը վանքերից մեկում կամ այլ տեղ,

¹⁸ Ըստ Երևանի պետ. համալսարանի հանդիպալիիր հրատարակության (Ա-2 ֆորմատ), զրաբար և աշխարհաբար (թարգմ. Ստ. Մալխասյան), Եր., 1981:

հավանաբար 478-480 թթ. միջև, մի աննախադեպ ծրագրով գրում է "Պատմություն Հայոց" սկզբից մինչև V դ. կեսը՝ առանց լուրջ գրադարանի, օգնականների, ապավինելով միայն ձեռքի տակ եղած գրքերին, իր հիշողության ու տրամաբանության ուժին, բայց և ոգևորված երիտասարդ իշխանի իմաստասեր բարքով և, ամենակարևորը, Աստուծո կամքով: Սույն պայմաններում գործը կազմակերպվում է այնպես, որ հեղինակը պարբերաբար իր շարադրանքը պետք է ուղարկի պատվիրատուին, նրանից ստանա պատասխան կարծիք՝ դիտողություններով, հետագա շարադրանքի հետ կապված առաջարկներով: Պատմիչը հաջորդիվ ուղարկում է շարունակությունը, հետո էլ նախորդ նամակ-թղթի պահանջների պատասխանն ու առաջարկությունները, եթե կան: Եվ այդպես ձևավորվում է աշխատանքային ընթացքի մի թղթակցային ռիթմ, որի թելադրանքով, բնականաբար, ուղարկվող շարադրանքի հատվածները ձգտում են հարաբերական ամբողջացման՝ կազմելով առանձին ճառ-գլուխներ: Բսկ զուգահեռաբար հերթական ուղերձի ծավալը պիտի հաշվարկվեր այնպես, որ ճառի ամբողջականությունը համապատասխաներ նաև մագաղաթի չափին, որ վերջինս "պարապ" չմնար և գրամիջոցների գերաժախ չլիներ: Պարզ է, որ աշխատանքի կազմակերպման նման եղանակը իր կնիքը պիտի թողներ երկի բնության վրա, որը Ն. Աղբալյանը իրավամբ բնորոշել է իբրև նամակագրային, ուղերձային¹⁹: Այդ բնության, իհարկե, այսօրվա ընթերցողին ավելի ակնհայտ կլիներ, եթե հետագայում չծածկվեր գլխակարգության ծանր շերտով: Դա կարելի է կոչել արտայուժետային հատկանիշ: Մոտավորապես վերականգնված այս աշխատանքային պայմանը, սակայն, ենթադրում է նաև այլ ենթապայմաններ՝ գործի կատարման ժամկետ, արագ ընթացք, կատարողի առողջություն, պատվիրատուի հաճախակի տեղաշարժեր կամ բացակայություն և այլն, որոնք կարող են փոխել գլուխների սահմանագատիչ հատկանիշների ազդեցության չափը:

Խորենացու Պատմությունը բացվում է "Գիրք առաջին: Ծննդաբանություն Հայոց Մեծաց" խորագրով, սկսվում է իշխան Սահակին ուղղված ուղերձից, որում հեղինակն ստանձնում է պատմություն գրելու պատվերը:

Այս ուղերձ-ճառը, որն ընդգրկում է I-Ա,Բ,Գ գլուխները՝ մոտ 4 էջ ծավալով, իր վերջին մասով հարուցում է պատվիրատուի հետաքրքրությունը արտաքին հեղինակների հանդեպ: Նա պատասխան նամակով պահանջում է սկսել հենց դրանցից՝ Ս. գրքից տարբերվող կարծիքներից:

Եթե հաշվի առնենք, որ Խորենացին և Բագրատունին իրար հետ հաղորդակցվում են թուրթ-նամակի միջոցով, ուստի և տարբեր բնակավայրերում են գտնվում, ուրեմն հերթական գլուխ-ճառի ուղարկումը հասցեատիրոջը և հետադարձ պատասխանի ստացումը, միջնադարյան չափումներով, կտևեր միջինը մեկ շաբաթ:

Սահակ իշխանը I գրքում դրսևորվում է իր միանգամայն աշխույժ հետաքրքրասիրությամբ, ուրույն հայացքներով և կենդանի ներկայությամբ: Առաջին գրքի ստեղծման աշխատանքներին նրա մասնակցությունը թույլ է տալիս արձանագրել

¹⁹ Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ.4, Պեյրութ, 1970: Նաև՝ Աշ. Ալեքսանյան, Հայ միջնադարյան նամակը, Եր., 1997, էջ 41, 48, 56-57:

գրապատմական մի վառ երևույթ, որը արտահայտվում է նաև հաջորդ գրքերում՝ 2-րդում՝ ուժեղ, 3-րդում՝ թույլ չափով: Դա Խորենացու Պատմության ստեղծման գործում պատվիրատու, մեկենաս, հովանավոր դարձած Սահակ Բագրատունու երկրորդ, ոչ պակաս կարևոր, խմբագրի դերն է: Այս դերի ստանձնումը եղել է ինքնաբերաբար, ողջ I գրքի ստեղծման ընթացքում, և արտահայտվել է պատմագրական սյուժեի կառուցվածքի, նյութերի ընտրության, հատկապես պատմության կենցաղագրական դրվագների և «մանր հերոսների» ներգրավման հարցում (հմմ. օր. III-ԾԵ):

ԳԼՈՒԽ 2. ՆԱԽ՝ ՎԵՐՋԻՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Խորենացու Պատմության նախնական գլուխները ավելի հաճախ եղել են անվերնագիր՝ երբեմն օժտված ենթավերնագրերով՝ ըստ անհրաժեշտության:

Ի տարբերություն Խորենացու Պատմության նախնական բնագրի անվերնագիր խոշոր գլխաբաժանումների, մեզ հասած բնագիրն իր վերնագրված, մանրատված գլխակարգով ներկայանում է որպես Խորենացու Պատմության նոր և վերջին խմբագրություն:

Ե՛րբ է ստեղծվել նոր խմբագրությունը, ու՞մ կողմից, ինչո՞ւ: Այս հարցերի պատասխանները, ցավոք, ստիպված ենք բխեցնել ոչ այնքան տվյալների բազմազանությունից, որքան նրանց տրամաբանությունից:

Երբ Հայաստանում IX դարի կեսերին նորից բարձրանում է նախարարական տների աշխուժացման ու թագավորության վերանորոգման ալիքը, աննախադեպ աճում է հետաքրքրությունը Մովսեսի ու նրա պատմագրքի հանդեպ, որովհետև վերջինս դառնում էր այդ քաղաքական շարժման հիմնական ոգևորիչը, գաղափարախոսը և տեղեկատու աղբյուրը:

Այս հոլովությունում Մովսեսի անվանման մեջ կատարվում է մի շատ նուրբ փոփոխություն, որը ինքնաբերաբար, տարերայնորեն արմատավորվում է բոլորի գիտակցության մեջ և տեղ գտնում Պատմության վերջին խմբագրությունում՝ որպես Մովսես Խորենացի: Հետագայում, XIX-XX դդ. հայագիտության մեջ Խորենացի անունը հարուցում է լուրջ խնդիր ու բանավեճ, թե որտե՞ղ էր «Խորեն» բնակավայրը, ինչո՞ւ տեղանվան մի այլ վկայություն չկա, որին էլ ձգտում էին այս կամ այն կերպ ինքնահնար պատասխաններ տալ պատմաբանները և բանասերները: Այդ զբաղմունքին զուգահեռ, սակայն, դեռևս XIXդ. վերջերից, խորենացիագետները անուշադրության են մատնել «Մովսես Խոյարունացի» անվանումը: Սկսած Գ. Տեր Մկրտչյանից, որ մի մագաղաթյա պահպանակից առաջինն է արձանագրել այս փաստը և հարցականի տակ առել իր «Հայկականք» շարքում, այն հանդիպել է Ն. Ադոնցի, Ն. Մառի, Մ. Աբեղյանի, Մտ. Մալխասյանի, Հր. Աճառյանի և այլոց ուշադրությանը, արժանացել է առանձին հրատարակությունների (Մտ. Մալխասյան, Ա. Աբրահամյան, Մ. Քոլանջյան):

Մեջ բերենք երկաթագիր ձեռագրի պատառիկը, որը պահպանվում է Մաշտոցի Մատենադարանում (ձեռ. N1875 Նարեկ, պահպանակ) և ժամանակագրվում է X դ., իսկ ավելի ճիշտ կլիներ՝ IX-X դդ. «Վկայաբանութիւն Սրբոյն Նունեայ եւ Մանեայ. Մովսիսի Խոյարունացոյ պատմութենէն», որին և հաջորդում է Ս. Նունեի պատմության առաջին

կէսը՝ Խորենացու Պատմության II գրքի 86-րդ գլխից, որի տարբերակները հնաբույր են (օր. հերոսուհու անվան ուղիղ ձևը՝ Նունի և ոչ Նունէ): Վերնագրից արդէն երևում է, որ պատմագրական հատվածն իբրև վկայաբանություն է առնված ճառընտրի կամ տոնական այլ ժողովածուի մեջ, և արտագրվել է հենց նմանատիպ գրքից, իսկ դա նշանակում է, որ այդ քաղվածքն ավելի հին ժամանակից կարող է գալ, գոնե VIII-IX դդ: Ի՞նչ է տալիս "Խոյարունացի" ձևը, որի հիմքում ունենք Խոյարունք տեղանունը: Այն մեկ անգամ ընդմիջտ վկայված է Դիոնիսիոս Թրակացու քերականագրքի հայ մեկնիչների երկերում՝ "Խոյարոնք" ձևով²⁰: Հայտնի է, որ Դիոնիսիոսի քերականության առաջին մեկնությունները ստեղծվել են V դ. Մովսեսի և Դավթի անուններով: Հայտնի է նաև, որ միջնադարյան ավանդույթը Մովսես քերականին նույնացնում է Մովսես պատմահոր հետ:

Անեզական թիվը ներկայացնող "Աթենք" տեղանվան դիմաց հայկական օրինակներ դնելու համար Մովսես մեկնիչը բերում է "Յրոնք և Խոյարոնք" տեղանունները: Յրոնքը Տարոն գավառի ավան է, որի մասին ստուգաբանական ավանդապատում է պահպանվել Խորենացու Պատմության I գրքում (գլ. 9), որից զգացվում է, որ հեղինակը հատուկ կարևորում է Յրոնքի պատմավիպական դերը իր շարադրանքում՝ վերջինիս ժողովրդական ստուգաբանության շնորհիվ: Յրոնքի հետ հիշատակվող Խոյարոնքը ցույց է տալիս, որ Մովսես Խորենացուն մականվանում տված գյուղը կամ ավանը, եղել է Մովսես Մեկնիչի ուշադրության ներքո, որպես Յրոնքի կողքին տեղադրված բնակավայր, որը նոր ժամանակներում հայտնի Խորոնք ավանն է: Եթե հաշվի առնենք, որ անեզական տեղանուններով հարուստ հայկական լեռնաշխարհից քերականը կարող էր շատ այլ օրինակներ բերել, գոնե Աթենքի համեմատ Հայաստանում ավելի հայտնի, բայց չի բերել և ընտրել է երկու հարևան վայրերի անուններ՝ Յրոնք - Խոյարոնք, նշանակում է դրանում դեր է խաղացել այն հոգեբանական գործոնը, որ մեկնիչ-հեղինակը նախընտրել է իրեն հարագատ վայրերի անուններ: Բնական է, որ հայ գրական ավանդույթում այս միևնույն անձը կոչվեր քերթողահայր՝ որպես I քերականության ստեղծող (որի կնիքը՝ Յրոնք-Խոյարոնքը, հետագայում փոխանցվում է մեկնիչից մեկնիչ), պատմահայր՝ որպես ամբողջական պատմության ստեղծող, փիլիսոփա՝ որպես իմաստասիրական երկերի թարգմանիչ: Ակնհայտ է, որ Սահակ Պարթևը, 428 թվականից պաշտոնակ լինելով և Տիգրանի արքայավայրում 4-5 տարի անցկացնելուց հետո, 432 / 433 թ. վերադառնում է Հայաստան, որտեղ նրա իրավասությունը սահմանափակվում էր հայրական կալվածքներով /Բագրևանդ, Տարոն/, որտեղից էլ նա Մաշտոցի հետ ընտրել է վերջին սերնդի աշակերտներին, որոնց հավանաբար մի քանի տարի վարժեցնելուց հետո արտասահմանյան ուսումնառության է գործուղել մոտ 436/437 թվականներին: Մովսես Խոյարունացի անվանման բարեհունչ տարբերակը առաջ է եկել անկախ որևէ խմբագրի կամքից, լեզվական արձարձման բանավոր ոլորտում, որտեղից էլ անցել է գրավորին, ճիշտ այնպես, ինչպես Խոյարոնքից առաջացել է կարճ ու բարեհունչ ձևը՝ Խորոնքը: Փաստորեն Խոյար>Խոր անցումը նույնն է երկու դեպքում էլ՝ Խոյար>Խոր+ոնք և Խոյար>Խոր+ունացի>Խորենացի: Քանի որ X դ.

²⁰ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915.

արդեն ունենք Մովսես Խորենացի անվանումը թե՛ Խորենացու Պատմության վերջին խմբագրության մեջ, թե՛ այլ հեղինակների երկերում (Հովհ. Դրասխ., Ստ. Ասողիկ, 981թ. հնագույն թղթե ձեռագիր), իսկ Մովսես Խոյարունացի ունենք դեռևս IX դարում, ապա հեշտ է նկատել ժամանակային այն միջակայքը (IX-X դդ.), երբ կատարվել է անվան փոփոխությունը: Նոր անվանման վերջնական տարածման ազդակ կարող էր դառնալ Խորենացու Պատմության վերջին խմբագրության ստեղծումը, որպես հետագա ընդօրինակման աղբյուր, նորանոր գրչությունների գաղափար՝ երաշխավորված հոգևոր վերնախավի կողմից:

Առաջին պատմիչը, որ մանրամասնաբար օգտվեց Խորենացու Պատմությունից նոր Պատմություն գրելու համար, Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսն էր (կառ. 898-929 թթ.): Իր պատմագրքով Հովհաննես պատմիչը ոչ միայն բարձրացրեց Մովսես Խորենացու հեղինակությունը, այլև նրան հռչակեց “ոճի” չափանիշ: Այդ է պատճառը, որ նա Խորենացու Պատմությունից օգտվում է ոչ միայն տվյալ թեմայի շրջանակում տեղեկություններ քաղելիս, այլև հետագա և իր ժամանակներին վերաբերվող տեղեկությունները Խորենացու „ոճով“, պատմելիս: Ահա նման մեթոդով աշխատելու համար պետք է որ զգացվեր պատմահոր գիրքը մանր գլխաբաժանումների ենթարկելու և գլխացանկերով օժտելու անհրաժեշտությունը: Իսկ այդ գործը կարող էր անգամ անել ոչ թե ինքը, այլ իր հանձնարարությամբ մեկ ուրիշը, նա, ով սույն հոդվածում կոչվում է գլխակարգող-խմբագիր:

Հավանաբար կաթողիկոս պատմիչի պահանջը կատարելուց զատ՝ խմբագիրը կյանքի է կոչել նոր գրչագրեր՝ նոր գլխակարգով ու հեղինակի բարեհունչ անվանումով:

ԳԼՈՒԽ 3. ԵՐԿՐՈՐԴ ԳՐՔԻ «ՊՍՄՄԱՀՅՈՒՄՈՒԹՅԱՆ» ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Հայտնի է, որ Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» II Գրքում Արտաշիսյան հարստություն չի ճանաչում և նրա թագավորներին ներկայացնում է Արշակունյաց հարստության կազմում՝ իբրև Արշակունի հերթական գահակալների:

Մեծ Հայքի առաջին Արշակունի թագավոր Վաղարշակը, ըստ Խորենացու, դնելով երկրի նոր իրավակարգի հիմքը, պետական կյանքի և հասարակական համակեցության տարբեր ոլորտներն ու նորմերը սահմանեց նախորդ իշխանական ավանդույթի հիման վրա և դրանով կապ ստեղծեց Պատմության I և II գրքերի միջև ոչ միայն անվանապես, այլև բովանդակապես: Վաղարշակի կառավարման բարեփոխումները որքան էլ նոր լինեին, շարունակվում էին Հայկյանների նոր սերնդների միջոցով: Որտեղից Խորենացու մոտ այն սխալ պատկերացումը, թե իբր Հայոց մեջ Արտաշիսյաններն ու Արշակունիները միասնական թագավորական տոհմ են ներկայացնում: Պատասխանը պարզ է. հայ ժողովրդական վիպական ավանդույթից: Խորենացու պատկերացմամբ Մարաբից հետո հայ թագավորների գործերը՝ Արտաշեսից մինչև Երվանդ, Ափրիկանոսը քաղել է Եդեսիայի արխիվներից, ուստի իր գլխավոր խնդիրն է համարում ընթերցողին հավաստիացնել նման արխիվի իրական գոյությունը:

Հետագա պատմության աղբյուր հայտարարելով Ափրիկանոսին և մյուս հույներին՝ հեղինակը չի բացառում, որ ներքին կյանքին վերաբերող որոշ տեղեկություններ քաղում է իր մշտական աղբյուրներից՝ հայկական բանավոր ավանդույթից (օր. Արտաշես-Տիգրան-Արտավազդ հերթագայությունը գահին, Վարաժնունեաց տոհմի ծագումը և այլն): Հասկանալի է, որ մի շարք դրվագներ էլ պատմահայրը շարադրում է իր պատկերացումներին ու ցանկությանը համապատասխան: Օր., Արտաշեսի և Կրեսոսի միջադեպի հարցում:

Որտեղից գիտեր Խորենացին, որ Ուռհայի դիվանի գրվածքները կամ քարտեսները բովանդակ փոխադրել է Ափրիկանոսը, եթե ոչ հենց Ափրիկանոսից: Մանավանդ, որ վերջինիս 5-րդ գիրքը, որպես հայոց պատմության աղբյուր, ճշգրտորեն նշում է Խորենացին: Չէ՞ որ ուրիշ միջնորդ պատմագիր Խորենացուն չի հուշել, թե հայկական նյութերը տրված են 5-րդ գրքում, կամ ոչ մի միջնորդ պատմագիր չի նշել, թե Ափրիկանոսն ընդօրինակել է Շեդսիո դիվանի նյութերը: Այս հարցադրումները, ցավոք, չեն հնչել Խորենացու քննադատների և պաշտպանների ամենատարբեր խոսքերում ու մեկնաբանություններում:

Եթե, ինչպես քննադատներն են ասում, Խորենացին օգտվել է միայն Հովսեփոսից, էլ ինչու՞ է նշում Ափրիկանոսին կամ Հիպոլիտին, դա լիովի բավական է իր նկարագրածին հավաստի բնույթ հաղորդելու համար, մանավանդ, որ Հովսեփոս Փլավիոսն ավելի հին, դեպքերին գրեթե ժամանակակից պատմիչ է, քան Հուլիոս Ափրիկանոսը (մ.թ III դ I քառորդ):

Խորենացու հավաստի պնդումով Ափրիկանոսը, Հովսեփոսը, Հիպոլիտը և մյուսներն աղբյուր են ծառայել իր Պատմության 2-րդ գրքի 2-րդից մինչև 30-րդ գլուխների համար: Այդ դեպքում ինչու՞ է պատմահայրը գրում, որ Շեդսիայի դիվանում դրված են մեր թագավորների գործերը «մինչև Աբգար և զկնի Աբգարու մինչև ցերուանդ»: Մի՞ թե ցույց տալու համար, որ Դիվանում ավելի շատ գրվածքներ կային, քան օգտագործել էր Ափրիկանոսը: Այո, որովհետև եթե Ափրիկանոսը դիվանից օգտվել է Աբգար VIII թագավորի օրոք, նշանակում է՝ նա կարող էր այնտեղից նյութ քաղել ոչ միայն Հիսուսի ժամանակակից Աբգար V-ի, այլև հետագա թագավորների մասին մինչև 221թ., երբ ավարտվել է նրա ժամանակագրությունը:

Թե ինչպես է Խորենացին օտար ազգի ու պետության մասին պատմող օտար աղբյուրից հայկական նյութ քաղում, դա նրա ստեղծագործական աշխատանոցի «գաղտնիքն» է, որ ցավալիորեն ուշ-ուշ է արժանանում հետազոտողների ուշադրությանը:

Խորենացին համաշխարհային պատմության մեջ սկզբնավորեց մի նոր ժանր, որը կարելի է կոչել՝ պատմակերտություն, պատմահյուսություն:

Խորենացու պատմահյուսության սկզբունքներից մեկը դիտարկել ենք ստորև, 2-րդ գրքի ԻԴ-ԼԳ գլուխների օրինակով:

Երբ կարճ ժամանակով քրիստոնեությունը պետական կրոն հռչակվեց Աբգար VIII-ի օրոք, Օսրոնե-Ուռհայում ծաղկեց եկեղեցական բանահյուսությունը:

Կրոնի պետականացման շրջանում հյուսված դարձաբանական լեզունը կարող էր իրականում գրի առնվել Աբգար VIII-ի օրոք կամ, որ ավելի հնարավոր է, նրանից հետո,

գուցե III դարի 2-րդ կեսին, որպեսզի Եդեսիայի եկեղեցին ժամանակ ունենար իր պաշտոնական դարձաբանական պատմությունը ձևավորելու համար:

Եվսեբիոս Կեսարացին Եդեսիո դիվանից առել և բառացի թարգմանել է սկզբնական համառոտ տարբերակը, որը դեռ չուներ շատ-շատ մանրամասներ, ինչպես նաև գրառող Լաբուբնայի անունը: Իսկ բուն Լաբուբնայի անունով կազմված ընդարձակ խմբագրությունը, որը ներառել է ոչ միայն նախնական համառոտը, Եվսեբիոսի հունարեն թարգմանությունը՝ նրա համապատասխան հավելումներով (Ադդայի փոխարեն Թադեոս և այլն), այլև հետագայի մի նոր լեզուն (Պատրոսիկե -Պրոտոսիկեի խաչգյուտը) և նորանոր գործող անձեր, կարող էր ստեղծվել միայն IV դ. II կեսին, գուցե և Եդեսիայից դուրս որևէ վայրում, որից էլ թարգմանվել է հայերեն ու բառացի օգտագործվել Խորենացու կողմից իբրև աղբյուր:

Հավանաբար սկսած III դ. կեսերից, Եդեսիայում բռնկվել էր մի նոր, ավելի հավաստի առաքյալի՝ Թովմայի պաշտամունքը՝ կապված վերջինիս մասունքների (գլուխ) ձեռքբերման հետ, ինչն էլ ստվերի տակ էր նետել Ադդայի հեղինակությունը: Դրան զուգահեռ IV դ., երբ Հերոնիմոսի ու Եվսեբիոսի հեղինակությամբ վավերացված էր Ադդայ-Թադեոս-Հակոբոս առաքյալների նույնությունը, Հայաստանում գնալով աճում էր Թադեոս առաքյալի պաշտամունքը Աբգարի և Ուռհայի արքունիքի դարձաբանական հենքի վրա:

Երբ V դ. II տասնամյակում, ըստ Ռ. Վարդանյանի, հայերեն է թարգմանվում Լաբուբնան, հայ թարգմանիչը պետք է որ զարմանքով կարդար, որ Թադեոս-Ադդայը վախճանվել և թաղվել է Ուռհայում, ուստի համոզմունքով ուղղում է սխալը և Թադեոսին քարոզչության է բերում դեպի արևելք, ուր և Սանատրուկ արքայի կողմից նրա դուստր Սանդուխտի հետ միասին սպանվում ու թաղվում է Հայքում: Հասկանալի է, որ Թադեոսի և Աբգարի շուրջ հյուսված դարձաբանական գրույցը հայացվում է, նախ, բանավոր՝ IV դ. ընթացքում, ապա, գրավոր՝ հայերեն թարգմանությամբ, վերջապես, Խորենացու կողմից «Հայոց Պատմության» մեջ արված մի քանի հաջորդական քայլերով:

ԳԼՈՒԽ 4. ԱՐՏԱՇԵՄԻ ՎԵՊԸ. ԱՆՑՈՒՄ ՎԵՊԻՑ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ.
ՕՂՅՈՒՄՊ ԵՎ ԲԱՐԴԱԾԱՆ

«Արտաշեսի վեպը» բաղկացած է երեք ճյուղից՝ Երվանդ և Արտաշես, Արտաշես և Սաթենիկ, Արտաշես և Արտավազդ, որոնք համապատասխանաբար ներկայացնում են հերոսի կյանքի վաղ շրջանը, հասունությունը, վախճանը: XIX դ. վերջից, երբ լույս տեսավ խորենացիագիտության երախտավոր Մանուկ Աբեղյանի հայտնի երկը²¹, իշխում է այն կարծիքը, որ խորենացու II գրքի ԼԶ-ԿԲ գլուխները շարադրված են ըստ բանավոր վիպական ավանդույթի և ըստ Անիի Արամազդի տաճարի քրմապետ Օղյունպի հունագիր մեհենական պատմության: Սակայն XX դ. II կեսին խորենացիագիտության մի այլ երախտավոր փորձեց, նշելով II, ԽԸ գլուխը, սահման գծել Խորենացու օգտագործած

²¹ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ, Վաղարշապատ, 1899:

վիպական նյութի և Օղյումպի շարադրած «պատմական» նյութի միջև²², որպեսզի ցույց տա, որ Օղյումպը արտավիպական նյութը քաղել է ավելի վավերական աղբյուրներից:

Բանն այն է, որ թե՛ Մ. Աբեղյանը, թե՛ Գ. Սարգսյանը չեն նկատել, որ Օղյումպը Արտաշեսի պատմության համար օգտագործել է և՛ բանավոր վիպական ավանդույթը, և՛ վավերական այլ աղբյուրներ: Իր հերթին Խորենացին ևս օգտագործել է և՛ բանավոր վեպը, և՛ այլ աղբյուրներ, որոնցից նշվում է, հատկապես, Օղյումպի անունը: Փաստորեն, վերջինիս շնորհիվ բանավոր վեպը Խորենացուն նյութ է մատակարարում կրկնակի չափով, մեկ՝ ուղղակի գուսանական ասքերից առնելով, մեկ էլ՝ միջնորդավորված քրմական պատումով: Այն, որ Օղյումպի նկարագրած Երվանդ-Արտաշեսի հակամարտությունը վիպական է, կասկածից վեր է, որովհետև երևում է անգամ Խորենացու համառոտագրումով և իրավամբ նկատված է Մ. Աբեղյանի ու հետագա այլ հետազոտողների կողմից: Անգամ Գ. Սարգսյանն է Արտաշեսի մանկության դրվագը բնորոշում իբրև «թափառական սյուժե», որը բանահյուսական բնույթի դասական դրսևորումն է²³:

Արդ, II, 48-րդ գլուխը տեղեկացնում է, որ Օղյումպը պատմում է Արտաշեսին վերաբերող ամբողջ նյութը: Իսկ այդ նյութն ընդգրկում է ԼԷ-Կ գլուխները՝ սահման ունենալով Արտաշեսի և Արտավազդի բախումը (II, ԿԱ), որովհետև ԿԶ գլխում Խորենացին նշում է, որ Արտավազդի թագավորումից (ԿԱ) մինչև Խոսրովի՝ արձան կանգնեցնելը (ԿԵ) ինքը քաղել է Բարդաձանի Պատմությունից:

Օղյումպը գրել է Արտաշեսի ողջ պատմությունը, Բարդաձանն ավելացրել է Արտավազդ, Տիրան, Տիգրան թագավորների պատմությունը («Յաւելլով իւր») և իր ժամանակի թագավորներին («որ ինչ առ իւրեան»): Բարդաձանը ճիշտ գիտի իր ժամանակի հայ թագավորներ Վաղարշին ու Խոսրովին, որոնք կառավարել են II դ. վերջին և III դ. I քառորդներում: Բայց որտեղի՞ց պիտի իմանար մ.թ.ա. II-I դարերի արքաներին՝ Արտաշեսի հաջորդներին. իհարկե, ժողովրդական բանավոր ավանդույթից, որից Խորենացին ևս մեջբերել է անգիր հատվածներ Արտավազդի և Վարդգեսի մասին: Փաստորեն, Բարդաձանի մոտ եղած երկու առանձին կտորները (Արտավազդ-Տիրան-Տիգրան և Վաղարշ-Խոսրով) Խորենացին միացրել է իրար՝ իբր միմյանց շարունակություն, ինչը չէր կարող թույլ տալ Բարդաձանը՝ տեսնելով, որ Օղյումպի Արտաշեսը պիտի որ ապրած լիներ հեռու անցյալում, իսկ Խորենացին տեղադրել է II դ. սկզբներում, որպեսզի շարունակաբար Արտավազդ-Տիրան-Տիգրանից հետո նույն դարի վերջում հայտնվի Վաղարշը: Այսինքն, ժամանակագրական սխալը Բարդաձանից չի գալիս, դա կապված է Խորենացու ժամանակագրական համակարգի հետ և նրա «թելադրանքով» է, ինչին Գ. Սարգսյանը կասեր «արտադրանք»:

Լինելով Անիի քրմապետ՝ Օղյումպը փորձել է գրել այդ նշանավոր մեղյանի, նրա կուռքերի, առաջին քրմապետի և հիմնադիր թագավորի մասին: Ինչպես միջնադարում որևէ «վանից պատմություն» գրողն այն համեմուն էր թագավորների պատմությամբ, այնպես էլ Օղյումպը գերծ չի մնացել այդ մղումից: Ուստի նրա

²² Գ. Սարգսյան, էջ 142-153:

²³ Գ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 207-209:

նպատակը եղել է ոչ թե Արտաշեսի ու Երվանդի, այլ այն ժամանակի ու միջավայրի պատմությունը հյուսել, որում հմնադրվել է Հայոց ամենակարևոր մեհյանը, որի առաջին քրմապետն էլ եղել է արքայի եղբայր Մաժանը:

Մ.թ.ա. I դ. ստեղծված Արտաշեսի վեպը համապատասխան փոփոխման է ենթարկվում մ.թ. I-II դդ., երբ Հայքում հաստատվում է Արշակունիների իշխանությունը, և ըստ այդմ էլ, Արտաշեսն ու իր սերունդները դառնում են Արշակունիներ: Վեպի այս վիճակն արձանագրելու համար Օղյումպ քուրմը պետք է ապրեր առնվազն II դ. II կեսին, երբ արդեն հասցրել էր առասպելի մշուշով պատվել նաև պատմական Սանատրուկը, որի դամբարանը ևս գտնվում է Անիի Արամազդյան տաճարի հովանու ներքո՝ իբրև նախնիների պաշտամունքի հերթական առարկա: Իսկ դա նշանակում է, որ Օղյումպը եղել է Մարաբ Մծուրնացու և Բարդաձանի ավագ ժամանակակիցը, և, հավանաբար, Վաղարշ թագավորի կողմից անցկացված բարեփոխումների ժամանակ Անիի մեհյանի դիրքը և հեղինակությունը պահպանելու նպատակով գրել է իր «Մեհենական պատմությունը»:

Անկախ Օղյումպ քուրմ-պատմիչի էթնիկ ինքնությունից, պետք է արձանագրել, որ նա հունարենով ստեղծել է հայկական պատմագրություն՝ ի շարունակումն մ.թ.ա. I դ. Տիգրան Մեծի և Արտավազդի օրոք սկզբնավորված պատմագրական ավանդույթի և ի նախապատրաստումն II դ. վերջի պատմիչ Մարաբ Մծուրնացու: Խորենացին Բարդաձանին գիտի և՛ ուղիղ աղբյուրից, և՛ Եվսեբիոսից²⁴: Բարդաձանը նպատակ ուներ ի հայտ բերելու անցյալում ու ներկայում եղած հեթանոսական հակամարդկային բարքերը, ճակատագրի կտորների պաշտամունքը և քննադատելու դրանք՝ որպես քրիստոնյա:

Խորենացին մեկենասին հավանաբար ներկայացրել է Բարդաձանի գրքի պարունակությունը, ուստի խնդրում է, որ չպահանջի ավելորդ մանրուքները գրել, մանավանդ, որ դրանք անհավաստի են և երկուսին էլ պատիվ չեն բերում:

Հաջորդ գլխում (ԿԵ) Խորենացին բերում է, երևի, Բարձր Հայքում Բարդաձանի լսած և գրառած մի ավանդություն Բասենի Վաղարշավան քաղաքի հիմնադրման մասին:

Բարդաձանը, որ ժամանակակից էր Հայոց Վաղարշ շթագավորին, իր մատյանում գրել էր, որ Վաղարշի որդի Խոսրովը, ով արշավում է հյուսիսսականների դեմ, լուծում է հոր վրեժը և ամեն հարյուրից մեկին պատանդ առնում, և իբրև իր տերության նշան, արձանագրություն է թողնում հունարեն գրով, որպեսզի հայտնի լինի իր հնազանդությունը Հռոմին: Այստեղ էլ ի հայտ է գալիս Բարդաձանի երկրորդ նպատակադրումը. նա, որպես քրիստոնյա, համաշխարհային Հռոմի գաղափարախոս է, գովում է այն թագավորներին, ովքեր հնազանդ են ու օգուտ են բերում Հռոմին, ինչպես Հայոց Տիրան, Վաղարշ, Խոսրով թագավորները: Վերջիններս, հսկելով Կովկասի քոչվոր ցեղերի մուտքը՝ ճորա Պահակը, ծառայում էին Հռոմին, դրա համար էլ արժանանում են Բարդաձանի գնահատանքին:

²⁴Եվսեբիոս Կեսարացի, Պատմություն եկեղեցու, 4-րդդպր., գլ. 2, էջ 312-313:

ԳԼՈՒԽ 5. ԵՐԿՐՈՐԴ ԳՐՔԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՈՒ ԱՐԴԻ ԳԼԽԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ
ԸՆԴՄԻՋԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» երկրորդ գիրքը, որը կոչվում է «Բան միջակ պատմութեան մերոնց նախնեաց», ընդգրկում է Ալեքսանդր Մեծից մինչև Տրդատ Մեծն ընկած ժամանակաշրջանը:

Ա-Ձ գլուխները միասին կազմել են Խորենացու II գրքի առաջին գլուխը, որը վերնագրված չի եղել:

Նախնական գլխակարգման մեջ II գլուխը, որ սահմանազատվում է նախորդից իր սկսվածքով («Այս դրուագ մեծ ...»), ընդգրկում է ներկա գլխաբաժանման II, Է, Ը, Թ գլուխները, որոնք ծավալով գերազանցում են նախորդ հինգին՝ միասին վերցրած:

Խորենացիական գլխակարգման 3-րդ գլուխը՝ դարձյալ աղբյուրաբանական սկսվածքով («Սլիզբն արասցուք պատմել քեզ ...»- II, Ժ), ընդգրկում է Ժ-ԺԳ, 4-րդ գլուխը՝ նոր թագավորի և ժամանակագրական սահմանի նշումով, ընդգրկում է ԺԴ-ԻԳ գլուխները, 5-րդ գլուխը՝ նորից ժամանակագրական սահմանի նշումով, ընդգրկում է ԻԴ-ԻԶ, ԻԷ (բացի II պարբերությո՞րը՝ «Յետ այսր... զնոսս ընկալաւ»), ԻԸ (չհաշված նախավերջին պարբերությո՞րը), ԻԹ-ԼԲ, և ավարտվում է աղբյուրաբանական տեղեկանքով:

6-րդ գլուխն սկսվում է ռճական նշումով և նախորդի մեջ արծարծված թեմայի կրկնումով («Բայց յետ համբառնալոյ Փրկչին մերոյ...») և ընդգրկում է ներկա գլխաբաժանման ԼԳ-ԼԶ հատերը՝ ավարտվելով աղբյուրաբանական սահմանազատիչ հատկանիշով:

7-րդ գլխի սահմանազատիչ հատկանիշը նախորդ թեմայի (Սանատրուկի մահվան) կրկնումն է («Յետ մահուանն Սանատրկոյ արքայի...»), ընդգրկում է ներկայի ԼԷ-ԼԸ գլուխները:

8-րդն ընդգրկում է ԼԹ-ԽԲ գլուխները:

9-րդ ճառն, առանց սահմանազատիչ հատկանիշի, ընդգրկել է ներկայիս ԽԳ-ԽԸ գլուխները:

10-րդ ճառն, սկսելով Գողթնում պատմվող վիպասանքների աղբյուրաբանական հիշատակումով (II, ԽԹ), ներառել է ԽԹ-ՄԱ գլուխները:

11-րդ ճառն սկզբնապես ընդգրկել է ՄԲ-ՄԴ գլուխները, որոնց միավորիչ առանցքը հերոս Սմբատ Բագրատունին է:

Արտաշեսապատումի վերջին ճառը՝ 12-րդը, բաղկացած էր ՄԵ-ՄԹ գլուխներից: Հնարավոր է, որ 12-րդի կազմում է եղել նաև Կ-ԿԱ գլուխները:

13-րդ ճառը, ընդունենք, Խորենացու մոտ բաղկացած էր ներկայիս ԿԲ-ԿԶ գլուխներից և ավարտվել է աղբյուրաբանական հղումով, և որ այդ ամենի (Արտավազդից մինչև Խոսրովը) պատմողը Բարդաձանն է:

14-րդ ճառն սկսվում է աղբյուրի տեսությամբ, որով նշվում է Տրդատ Մեծի աջող քարտուղար Ագաթանգեղոսի գրքի բովանդակային կազմը՝ Սասանյան հեղաշրջումից ու Խոսրովի վրեժխնդրությունից մինչև Անակի դավադրությունը (II, ԿԷ), որից հետո, եթե ընդմիջարկված II, ԿԸ գլուխը և II, ԿԹ-ի սկզբի 7.5 տողերը շրջանցենք, 14-րդ ճառն

ընդգրկում է ԿԷ, ԿԹ-ի II կեսը (7.5 տող), Հ, ՀԱ-ՀԳ (չհաշված մասնակի ընդմիջարկումներ), ՀԴ գլուխները:

Այնուհետև, 15-րդ ճառը բացվում է աղբյուրաբանական նախաբանով, որում ներկայացվում է Փերմիլիանոս եպիսկոպոսը՝ որպես Խոսրովի և Տրդատի միջև ընկած անիշխանության մասին ստույգ պատմող, ինչպես նաև 3-րդ գրքի աղբյուրների հիշատակումով (ՀԵ), և որի կազմի մեջ մտնում են ներկայիս ՀԶ-ՀԹ գլուխները:

16-րդ ճառն ընդգրկում է Ձ, ՁԲ, ապա ՁԳ-ի առաջին պարբերությոը և ՁԴ (որոնք իրար բնականորեն կապվում են), ՁԵ (բացի վերջին նախադասությունը, որ հետսամուտ է) գլուխները, ՁԷ-ի I պարբերությոը և չորս տող IV պարբերությոց, ինչպես նաև Ղ գլխի նախավերջին պարբերությոը:

17-րդ ճառում չեն ընդգրկվում այն բոլոր նշված գլուխները, որոնք մասամբ են ներառվել 16-րդ ճառում:

Մնացին ՂԱ, չհաշված II պարբերությոը և որոշ, իհարկե, միջամտությունները, և ՂԲ գլուխները, որոնք կազմում են պատմահոր նախնական բնագրի 17-րդ ճառը:

Որպես հետսամուտ մասեր՝ դուրս են դիտվել II գրքի բնագրից հետևյալ գլուխները՝ մասամբ կամ լիովին.

ԻԷ, ԻԸ, ԽԲ, ԿԷ, ԿԸ, ԿԹ, ՀԱ, ՀԲ, ՀԳ, ՁԱ, ՁԲ, ՁԵ, ՁԶ, ՁԷ, ՁԸ, ՁԹ, Ղ, ՂԱ:

Առաջին հետսամուտ հատվածը III ԻԷ գլխի II պարբերությոն է (11 տող՝ ըստ քննական բնագրի)²⁵:

II, ԻԷ գլխի I պարբերությոց հետո հայտնվում է միանգամայն խորթ, բնագրի հստակ տրամաբանությունը խախտող մի պարբերությո (2-րդը)՝ Կամսարականների հիշատակումով:

Հարց է ծագում, թե ինչու է ընդմիջարկողը հետագա ասելիքը (օր. II, ՀԱ-ՀԴ) նախապես կրկնում: Նշանակում է հետագա ասելիքում չկար այն տեղեկությունը, ինչ ինքը կուզենար տեսնել: Դա Կարենյան Պահլավի ցեղից Կամսարականներին սերեցնելու ցանկությունն էր, այնպես, ինչպես Սուրենյան Պահլավից սերված էր համարվում Գրիգոր Լուսավորչի տոհմը:

Սուրենյան Պահլավի ու Գրիգոր Լուսավորչի միջև ճանաչված տոհմային կապին զուգահեռ Կարենյանների և Կամսարականների կապը տեսնելն այնքան անհրաժեշտ էր, որ ստիպել է բռնի միջամտություններ անել մի քանի անգամ՝ Կամսարական տոհմի հետ հիշատակելով նաև Գրիգորի տոհմը:

Իրոք, հաջորդ հետսամուտ բնագրային հատվածը ևս (II, ԽԲ) կապված է Կամսարականների անվան հետ:

4-րդ և 5-րդ հետսամուտ հատվածները ևս (II, ԿԸ, ԿԹ) ուղղակի առնչվում են Կամսարականների թեմային:

Հաջորդ ընդմիջարկումը եղել է II Հ գլխի շարունակության մեջ: Այդ գլխի վերջում, աղբյուրաբանական տեղեկանքից հետո հենց որ Խորենացին խոստանում է ասել միայն ստույգը, ընդմիջարկողին հարմար առիթ է թվում՝ միջամտելու և «ստույգը»

²⁵ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը և ներած., Մ. Աբելյանի և Ս. Յարութինյանի (նմանահանություն, լրացումները Ա. Սարգսեանի), Եր., 1991, էջ 144-145:

պատմելու, հար և նման այն դեպքին, երբ նախորդում (ԿԷ-ի վերջում) խմբագիրը նույնպես օգտվել է նույն աղբյուրից («Արդ, թեպետ և Ազաթանգեղոս ...»):

Ենթադրաբար բերվում են II, ՀԱ, ՀԲ, ՀԳ գլուխների հետսամուտ տողերը:

Հաջորդ ընդմիջարկումը, ըստ իս, կարելի է գտնել II, ՁԱ գլխում՝ 3-րդ պարբերության վերջին չորս տողերով և 4-րդ պարբերությամբ հանդերձ:

Իսկ II ՁԳ-ի ընդմիջարկումը վերաբերում է Կոստանդիանոս կեսարի և Դիոկլետիանոսի դուստր Մաքսիմինայի հարսանիքին, խաչի տեսիլին, անբուժելի հիվանդությանը և քրիստոնյա դառնալուն՝ քաղված Սոկրատի Եկեղեցական Պատմությանը կցված Սեղբեստրոսի վարքից:

Հաջորդ ընդմիջարկությունը II ՁԵ-ի վերջին նախադասությունն է, որ կոչված է նախապատրաստելու մի ամբողջ ընդմիջարկյալ գլուխ. «Բայց յաղագս հաւատոցն Միհրանայ (որի մասին հիշվել է նախորդ տողերում - Ա. Ս.) և աշխարհին Վրաց ասել կայ մեզ առաջի» (II, ՁԵ): Վրաց դարձի և նրա հերոսուհի Նունեի մասին պատմող հետսամուտ հատվածը (II, ՁԶ), որ նույնպես ավարտվում է Ազաթանգեղոսի հղումով, դարձյալ բանասիրական վիճահարույց խնդիր է դարձել:

ՁԶ գլխի վերջին նախադասությունը կոչված է կապ հաստատելու նախորդ պատումի հետ:

II ՁԷ գլխում I պարբերությանց հետո խմբագիրը հարմար աղիթ է գտնում ընդմիջարկելու, որովհետև քանի Տրդատը «ընդ հիւսիսային կողմանս իշխանութեանն Պարսից դիմեաց տարեկան չուառորութեամբ», հարկավոր էր այնտեղ հանդիպեցնել Տրդատին ու Կարենյան տոհմի հետնորդ Կամսարին, որից էլ սկիզբ էր առնելու Հայոց Կամսարական նախարարական տունը:

Հաջորդ ՁԸ, ՁԹ և Ղ (բացի նախավերջին պարբերությոթը) գլուխները լիովին ընդմիջարկվել են խմբագրի կողմից՝ աղբյուր ունենալով Մեծ ու Փոքր Սոկրատները:

II Ղ գլխում խմբագիրն ավարտում է իր «Կամսարականյան» ծրագիրը՝ տոհմի հիմնադիր Կամսարին մկրտել տալով Նիկիո կանոններն ընդունած Գրիգորի ձեռքով:

ԳԼՈՒԽ 6. ԽՄԲԱԳԻՐԸ ԱԿԱՄՍ ՀԱՅՏԵՆՈՒՄ Է ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏԻ ՏԵՂԸ

Մովսես Խորենացու “Հայոց պատմության” 2-րդ գրքում Երվանդ թագավորի 4 կառույցների մասին պատմող ԼԹ-ԽԲ գլուխները աչքի են ընկնում մի քանի ներքնագրային հակասություններով:

Խորենացու վերականգնած բնագրից երևում է, որ ԽԲ գլուխը եղել է ԼԹ-ի շարունակությունը՝ որպես մեկ միասնական հանգամանալի պատում Երվանդի քաղաքի կառուցման մասին: ԼԹ և ԽԲ գլուխները որպես մեկ ամբողջություն կարդալու դեպքում վերանում են վերոնշյալ ներքնագրային հակասությունները: Մասնավորապես, լուծվում է Երվանդի անունով երկու քաղաքների ընկալման ու տեղադրման տարօրինակ խնդիրը, երկուսի փոխարեն ստանում ենք մեկ մայրաքաղաք՝ անվան երկու տարբերակով (-չատ և -կերտ):

Բնագրագիտականից գատ հիշյալ թյուրընթերցումից առաջ են եկել նաև հնագիտական հակասություններ Երվանդի մայրաքաղաքի երկատման և երկու

քաղաքների տեղադրման հարցում (Բ. Առաքելյան, Վ. Հարությունյան, Ժ.Խաչատրյան, Ֆ. Տեր-Մարտիրոսով և այլք):

Այն, որ հայագիտությունը Խորենացու Պատմության բնագրի թյուրընթերցման արդյունքում կարող էր մեկ քաղաքից ստանալ երկուսը և ջանք թափել գտնելու երկրորդի տեղը, երևում է նաև Երվանդի կառուցած մյուս քաղաքի՝ Բագարանի օրինակով: Մոտավորապես նույն «ճակատագրական» ընկալման հետևանքով այս քաղաքից անկախ է մնացել Դրասխանակերտը, որը ևս հնագիտության մեջ արժանացել է իրարամերժ տեղադրումների: Մինևույն քաղաքի անվան երկու տարբերակներից վաղը և պաշտոնականը Դրասխանակերտն է, իսկ ավելի ուշը և ժողովրդականը, 9-րդ դարից նաև պաշտոնականը՝ Բագարանն է: Ասվածի բնագրային հիմնավորումն է համարվում Խորենացու Պատմության II-ԽԲ և II-Ղ գլուխների հետևյալ տեղիների համադրումը:

1. Խորենացու Պատմության II-ԼԹ, Խ, ԽԱ, ԽԲ գլուխներում պատմվող Երվանդյան շինարարական աշխատանքներին հաջորդում է այսպիսի տեղեկություն. «Չայս ամենայն գործեցեալսն Երուանդայ (այսինքն՝ Երվանդակերտ-Երվանդաշատը, անտառը, Բագարանը - Ա.Ս.) պարգևե մեծն Տրդատ մարդկան ազգին Կամսարականաց, որպէս մտերմաց և արեան կցորդաց ազգին Արշակունեաց, զոր յիրում տեղուջն պատմեսցուք» (II-ԽԲ):

2. Բացելով վերոնշյալ տեղը՝ կարդում ենք. «(Տրդատը - Ա.Ս.)... տայ նմա (Կամսարին-Ա.Ս.) ժառանգութիւն զմեծ դաստակերտն Արտաշիսի, որ այժմ ասի Դրասխանակերտ և ըզգաւառն Շիրակ, որպէս ազգականի իւրում և մտերիմ հարազատի... յաւելու և այլս պարգևս (Արշավիրին - Ա.Ս.) զքաղաքն Երուանդայ և զնորին գաւառն մինչև ցկատար ձորոյն մեծի... Իսկ Արշաւիր առաւել սիրեալ զգաւառն՝ յիւր անուն կոչէ Արշարունիս, քանզի յառաջ Երասխաձոր կոչէր» (II-Ղ):

Համադրումից պարզ է դառնում, որ Տրդատը նախ նվիրում է Կամսարականների Երվանդի կառուցած Բագարանը՝ Շիրակ գավառով, ապա՝ օրեր անց նվիրում է Երվանդաշատ-Երվանդակերտը՝ Արշարունիք գավառով (անտառը չի նշվում առանձին՝ գավառի մեջ մտնելու կամ հետագայում վերացած լինելու պատճառով): Մեջբերումներից միանշանակ երևում է, որ Բագարանին համապատասխանում է Դրասխանակերտը, որը կոչվում է նաև «Արտաշեսի մեծ դաստակերտ»:

Այսպիսով, Բագարանի և Դրասխանակերտի նույնության բնագրային ուղղակի վկայությունն այն է, որ Տրդատ թագավորի կողմից Կամսարականներին տրված քաղաքը առաջին անգամ կոչվում է Բագարան, երկրորդ անգամ կոչվում է Դրասխանակերտ:

ԳԼՈՒԽ 7. ԿԱՄՍԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՆՈՐ ԽՏԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կամսարականների գաղափարախոսական ծրագիրն արտահայտելու համար խմբագիրը բավականին նուրբ աշխատանք է կատարել, դեռևս II գրքի ԲԷ գլխից սկսած:

Նման կողմնակալություն Խորենացին ոչ մի տեղ չունի, դա նրան հատուկ չէ առհասարակ: Եթե Խորենացու պատվիրատու մեկենասը հայտնի չլիներ, հնարավոր էր կարծել, թե պատմահոր մեկենասը Կամսարականներից է:

Ողջ պատումը, որի վերջնակետը փաստորեն, II, Ղ գլուխն է, կոչված է «վավերացնելու» Կամսարականների ժառանգական իրավունքը Շիրակի և Արշարունիքի նկատմամբ, երկրորդ, Տրդատով և Գրիգորով հավաստիացնելու նրանց «թագավորական» ծագումը, երրորդ, ուղղակի հաստատելու այն վաղեմի իրավունքը, որը, ըստ ավագության կարգի, ունեն Երանշահիի արքայական գահի նկատմամբ:

Խորենացու պատմության II գրքի բոլոր ընդմիջարկումները հանգում են Կամսարականների կարևորմանը և Հռոմի կամ Բյուզանդական կայսրության հետ դրականորեն կապվելու միտումներին:

Թե՛ II և թե՛ III գրքերում եղած ընդմիջարկումների համար ի՞նչ աղբյուրներ են օգտագործվել (իրական կյանք, խմբագրի ցանկություն, որևիցե գրական երկ և այլն), առայժմ դժվար է ճշգրտորեն սահմանել, բայց որ երկու գրավոր աղբյուր արդեն հայտնի է, դա վստահորեն կարող ենք ասել: Մեկը «Սեղբեստրոսի վարքն» է, մյուսը Սոկրատ Սքոլաստիկոսի «Եկեղեցական պատմությունն» է²⁶, որոնք առանձին-առանձին կամ միասնաբար՝ իբրև VII դ. վերջի կամ VIII դ. սկզբի Սոկրատ - Սեղբեստրոսյան հայերեն բնագիր («Փոքր Սոկրատ»), հայ դասական բանասիրության մեջ համարվել են Խորենացու գրական աղբյուր, որից քաղագրելով, իբր, հեղինակը մատնել է իրեն (Կարիեր, Գուտշմիտ, Խալաթյանց, Թոմսոն և այլք):

Արդ, երբ արդեն պարզ են II և III գրքերի ընդմիջարկումների միտումները և, մանավանդ, Կամսարականների նպատակադրումները, երբ պարզ են նաև այդ ընդմիջարկումների աղբյուրները (Սեղբեստրոսի վարք և Սոկրատի Պատմություն), երբ արդեն վաղուց գիտենք, որ նշված աղբյուրները հունարենից թարգմանել են տվել VII դ. վերջին քառորդի Կամսարական տան նախարար Ներսեհը և նրա փեսան՝ Վրաց իշխան Ներսեհը, մնում է եզրահանգել, որ Խորենացու II և III գրքերի ընդմիջարկումները եղել են Կամսարական իշխանի պատվերով: Որևէ գրագետ գիտակ չէր ճարվի ընդմիջարկման այդ նուրբ աշխատանքը կատարելու, եթե անձամբ շահախնդիր չլիներ, այսինքն, Կամսարական չլիներ կամ էլ Կամսարականների պատվերը չստանար:

Ներսեհ իշխանը ոչ միայն գրասեր, ուսյալ, գիտությունը խրախուսող էր, այլև ճարտարապետական նշանավոր կոթողների նախաձեռնող էր «Շինող եկեղեցեաց»: Այսինքն, նրա պատվերները, միտված հայոց հոգևոր-մշակութային զարգացմանը, բազմապլան էին, որ միաժամանակ կատարվում էին տարբեր ոլորտներում՝ մեկնություն, համարողություն, թարգմանություն, ճարտարապետություն և այլն:

Խորենացու Պատմության միանգամայն բովանդակային նոր խմբագրությունը ոչ թե ընդմիջարկող խմբագրի քմահաճույքի ու ճաշակի, այլ գաղափարական-քաղաքական լուրջ պատվերի արդյունք է: Խմբագիր կարող էր լինել թե՛ Անանիա Շիրակացին, թե՛ Գրիգոր Արշարունին, բայց ավելի շատ պետք է հակվել Փիլոն Տիրակացու թեկնածության վրա, քանի դեռ մանրակրկիտ համադրական բնագրագիտական վերլուծում չի արվել: Առայժմ հոգուտ Փիլոնի է խոսում այն փաստը, որ Մեծ Սոկրատի ու

²⁶ Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական պատմութիւն (թարգմանեաց Փիլոն Տիրակացի) եւ Պատմութիւն վարուց սրբոյն Սեղբեստրոսի եպիսկոպոսին Հռովմայ (թարգմանեալ Աբասուն Գրիգորի Չորափորեցոյ), աշխատասիրութեամբ Մեսրոպ վրդ. Տեր Մովսէսեան (միաբանի Ս. Էջմիածնի), Վաղարշապատ, 1897:

Սեդեատրոսի հիման վրա Փոքր Սոկրատ կազմողն օգտագործել է Խորենացու պատմության թարմագույն խմբագրությունը²⁷: Ընդ որում, միակ մարդը, ով Մեծ Սոկրատից ու Սեդեատրոսից քաղագրել է Խորենացու Պատմության ընդմիջարկումները, նա էլ կարող էր երեքից կազմել Փոքր Սոկրատը: Դրա համար էլ բանասիրության մեջ առաջվմ հավանական է դիտվել Ն. Ակիմյանի այն տեսակետը, թե Մեծ Սոկրատի թարգմանիչ Փիլոն Տիրակացին նաև համառոտագրել է այն մոտ 700 թ.:

Փաստորեն նույն ընտանիքից ու նրա քաղաքական ծրագրից է բխում նաև Սեդեատրոսի թարգմանական պատվերը, եթե հաշվի առնենք, որ Վրացի Ներսեհը Շիրակ-Արշարունիքի տեր Ներսեհ Կամսարականի փեսան էր, իսկ կատարողը նույն գավառի թեմի առաջնորդ Գրիգոր Արշարունի եպիսկոպոսն էր՝ հավանաբար նույն տոհմից:

Վրաց իշխանը դրանով նաև նպաստում էր կայսերամետ այն քաղաքականությանը, որը վարում էր Կամսարական տունը և որը քաղաքականապես միավորում էր ուժեղ խնամիական դաշինքի մեջ հայ և վրաց գորավոր իշխաններին: Այդ դաշինքը պետք է որ հաշվի առներ նաև կայսրը, որովհետև այն ուներ թե՛ աշխարհիկ-քաղաքական, թե՛ դավանաբանական ենթատողային իմաստներ:

Եթե հիշենք, որ Ներսեհ Կամսարականը 689-93 թթ. եղել է Հայոց իշխան՝ ոչ թե ընտրված, այլ ուղղակի նշանակված Հուստինիանոս II-ի կողմից (685-695, 705-715), ապա հիմնավորված կլինի «ապոհյուպատ պատրիկ» տիտղոսը, որ կայսրերը տալիս էին Հայոց իշխանին²⁸: Վերջինիս մի քայլ էր պակասում Հայոց թագավոր դառնալու համար, և այդ քայլը երազում էր անել նաև Ներսեհ Կամսարականը:

689թ. երբ Հուստինիանոս կայսրը վերագրավեց Հարավային Կովկասը և Հայոց իշխան նշանակեց Ներսեհին, հաշվի առավ նրա քաղաքական բյուզանդամետ կողմնորոշումը նախընթաց տասնամյակում, բայց և նոր հույս ներշնչեց Ներսեհ Կամսարականին ու նրա դաշնակից իշխանական շրջանակին, որ հնարավոր է կայսեր օգնությամբ վերահաստատել Հայոց թագավորի գահը՝ որպես անցումային փուլ դեպի Երանշահի թագի վերականգնումը: Սասանյանների կործանումը (652 թ.) դեռ չէր մոռացվել դարավերջին, և դեռ տարբեր քաղաքական հոսանքներ էին առաջանում՝ ազատագրելու Իրանի գահը խալիֆայից:

Ներսեհ Կամսարականը չէր կորցնում լավատեսությունը նաև 693 թ. արաբների արշավանքի հետևանքով Հայոց իշխանի պաշտոնը կորցնելուց հետո, երբ նրա ծրագրով թարգմանական գործուղման էր մեկնում մայրաքաղաք Պոլիս Փիլոն Տիրակացին, երբ Լևոն II-ի օրոք Խորենացու խմբագրման պատվեր էր տալիս, կամ էլ երբ իր եկեղեցաշինական պլանն էր իրագործում (Թալնո տաճար և այլն), վերջապես, երբ հանուն խաղաղության իր վերջին ճակատամարտն էր մղում արաբների դեմ:

²⁷Համեմատաբար վերջին գործերից է Մ.Ширинян, Краткая редакция древнеармянского перевода, «Церковской истории» Сократа Схоластика, «Византийский временник», Т.43, Москва, 1982, стр. 231-241: Վաղ գործերից տե՛ս Ն. Ակիմյան, Քրիստոնեության մուտքը Հայաստան և Վրաստան, Վիեննա, 1949:

²⁸Ա. Տեր-Ղեվոնդյան, «Հայոց իշխան» տիտղոսի ծագումը և Հայոց տերությունը 7-րդ դարում, «Արամ Տեր-Ղեվոնդյան, Հողվածների ժողովածու», Երևան, 2003, էջ 190-196:

Սոկրատի թարգմանիչ-համառոտող, Խորենացու խմբագիր-ընդմիջարկող Փիլոն Տիրակացին փայլուն աշխատանք է կատարել արտահայտելու համար Կամսարականների գաղափարախոսական ու քաղաքական ծրագրերը ոչ միայն նշված թեմաներով, այլև դրանցից դուրս, հավանաբար, նաև նոր ժամանակագրության («Գիրք կայսերաց»), Փոքր Կորյունի, Դաշանց թղթի ստեղծման ու խմբագրման գործում:

Հետսքրքիր է, որ ինչպես փոխադարձ կապի մեջ են Սոկրատի համառոտումը և Խորենացու խմբագրումը, այնպես էլ իրար հետ կապված են Փոքր Կորյունի ստեղծումը և Խորենացու III գրքի խմբագրումը, ինչը ևս վկայում է II և III գրքերի միասնական խմբագրական ձեռքի մասին:

Այս ամենից հետո, պետք է կարծել, պատվիրատու իշխանը գոհ է մնացել խմբագրի արդյունքից, չնայած իրական քաղաքական նպատակադրումների մասով ինքը կարող էր դժգոհ լինել, ինչպես ցույց է տվել պատմությունը:

ԳԼՈՒԽ 8. ԵՐԸՈՐԴ ԳՐՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳԼԽԱԿԱՐԳԸ

«Հատած երրորդ» կոչվող գիրքը՝ «Ավարտաբանութիւն մերոց հայրենեաց», սկսվում է աղբյուրաբանական նախաբանով, որտեղ կարճ հիշատակվում է II գրքի նյութը՝ «ի մեծէն Աղեքսանդրէ մինչև ի վախճան սրբոյն Տրդատայ», և սահմանվում է հետագա գրելիքը. «Երրորդ առնելով գիրս, որ ինչ յետ սրբոյն Տրդատայ մինչև ի սպառել Արշակունեաց ազգին ի թագաւորութենէ, և զաւակի սրբոյն Գրիգորի՝ ի քահանայապետութենէ»: Այսինքն, մինչև 428-30-ական թվականները:

Սահակ Բագրատունին հետագա շարադրանքի ծրագիրը և հավաստիացումը ստանալով, հավանաբար, խիստ զբաղված լինելու, երկրից բացակայելու կամ այլ պատճառով որոշում է նամակագրական երկխոսությունը միառժամանակ ընդհատել: Մովսես Խորենացին, փաստորեն, առաջիկայում, կարող էր գլխակարգել շարադրանքն ըստ իր հեղինակային մտահղացման, առանց պատվիրատուին գլուխ-գլուխ ուղարկելու պարտադրանքի, ուստի և առանց նրա խմբագրական միջամտության, ինչպես դա տեսանք առաջին գրքի օրինակներով: Պատմությունը շարադրելու այս նոր պայմանը ավելորդ է դարձնում նաև գլխաբաժան տարբեր նշանների անհրաժեշտությունը, բավական է միայն պահպանել թեմատիկ տարբերակիչ հատկանիշը, ինչն էլ արվել է: Արդյունքում գլխակարգը կազմվել է ըստ հայոց թագավորների գահակալման ժամանակաշրջանների սրանց համապատասխանող գլուխների ծավալով ու քանակով: Նման հաշվարկով կատանանք Խոսրով, Տիրան, Արշակ, Պապ, Վարազդատ, Արշակ-Վաղարշակ եղբայրներ և զուգահեռ Խոսրով, Վռամշապուհ, Արտաշիր թագավորների ժամանակը նկարագրող ութ գլուխներ, ևս մեկ կարճ գլուխ III գրքի սկսվածքով մինչև Խոսրովը՝ կաթողիկոսական տան ճակատագրի վերաբերյալ գլուխը, ինչպես նշված էր ծրագրում, վերջապես «Ողբը»՝ իբրև եզրափակիչ գլուխ: Հնարավոր համարելով, որ Արշակ II-ին նվիրված գլուխը մյուսների համեմատ կրկնակի ծավալի պատճառով կարող էր կիսվել երկու պայմանական գլուխների՝ զուտ տեխնիկական համաչափության նկատառումով, կարող ենք III գրքին վերագրել մոտ 12 գլուխ, ներկայիս 68-ի փոխարեն:

Կարելի է որոշել, թե երբվանից է վերջինս ընդունել ու ընթերցել կուտակված պատմագրական նյութը: Հայքում 4 տարի թագավորած պարսիկ արքայորդի Շապուհի և հայ իշխանների առօրյայի կենցաղագրումից հետո Խորենացու «Պատմութեան» տվյալ գլխի վերջում (ԾԵ) դիմելով Սահակ Բագրատունուն, գրում է, թե այդ ամենի մասին իրեն գրել հարկադրեց Սահակի խնդրանքը («Եւ զայս պատմել մեզ՝ քոյդ հարկաւորեաց ընդ վայր խնդիր»):

Ուրեմն հեղինակն ինքը չէր գրելու այդ մասին, քանի որ դրանք ավելորդ մանրունք է համարում:

Երբ հայտնվեց խմբագիրը, որին ստիպված է դիմել ու բավարարել հեղինակը: Եթե ԾԵ գլխի բովանդակությունը սկզբնական 9-րդ գլխի կազմում շարադրված է նրա պահանջով, ուրեմն 8-րդ գլուխն արդեն նա կարդացել էր և պատասխան նամակում պահանջել էր գրել այդ մասին:

Բայց արդեն պատվիրատուի ներկայությունը ստիպում է, որ հեղինակը հաջորդ բոլոր գլուխները, մինչև գրքի ավարտը, մեկ առ մեկ ուղարկի պատվիրատուին՝ ընթերցելու:

Դա երևում է նրանից, որ 11-րդ գլխում Խորենացին դարձյալ պատասխանում է, այս անգամ մերժումով, մի «կողմնակի» պահանջի, որը հաստատ ներկայացվել է պատվերատուի կողմից նախորդ գլուխն ընթերցելուց հետո: Իսկ այդ գլխում (10) կարդացել է, թե ինչպես է Սուրմակ Արծկեացին Տիգրանում չարախոսում հայոց արքայի և կաթողիկոս Սահակի հունամետության մասին, որի պատճառով այդ երկուսին կանչում են պարսից արքունիք քննելու համար (ԿԳ-ԿԴ):

Հարց է ծագում, թե ավելի ուշ արքունական ատյանում ինչպիսի ինքնապաշտպանական ճառ է ասել մեծն Սահակը, որով հիացել է Վռամ թագավորը և նրան ուղարկել Հայաստան՝ կատարելով նաև վերջինիս խնդրանքները: Եվ պահանջել է մեջբերել այդ ճառը:

Մովսես Խորենացին խոստովանում է, թե ինքը չի ուզում Սահակ կաթողիկոսի անունով ճառ հորինել ոչ թե այն պատճառով, որ չի կարելի կեղծել և անիրական ճառ հյուսել, այլ այն պատճառով, որ ժամանակ չունի այդ անելու, որովհետև շտապում է պատմությունը շուտ ավարտել իր բուն գործերին անցնելու համար:

**ԳԼՈՒԽ 9. ՄԱՇՏՈՅԱՊԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ «ՀԱՅՈՑ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԵՐՐՈՐԴ ԳՐՔԻ ԸՆԴՄԻՋԱՐԿՈՒՄ**

Խորենացու պատմագրքում մաշտոցապատում էջերն ուշադրություն են գրավում նախ և առաջ այնու, որ հայոց այբուբենի ստեղծումը միակ թեման է, որ ներկայացվում է ոչ թե միանագամից, մեկ- երկու կամ երեք գլխի սահմաններում՝ իրար շարունակելով, այլ ցրված է 11 գլուխների մեջ՝ ընդհատված տարբեր թեմաներով, ինչպես տեսանք՝ հար և նման Կամսարականների թեմային, որ II գրքում ցրված էր մոտ 10 գլուխներում: Նման պատմողական ոճը խորթ է Խորենացուն և նրա Պատմության կառուցվածքային տրամաբանությանը:

Հեղինակի պատմելաոճի նմանակումով ու հայ նախարարական միջավայրում տիրող հոգեկան մթնոլորտի հետ հերոսի ներդաշնակումով խմբագիր ընդմիջարկողը փորձել է հատուկ քողարկել իր կեղծիքը: Եվ ինչպես բնագրագիտության մեջ հայտնի է, բնագրի կեղծարարը սովորաբար բացահայտվում է կեղծիքի քողարկման հատուկ մղումից: Խմբագիրը 47-րդ գլխում տեղիք է տալիս մի սխալի, ինչը հինգերորդդարեցին թույլ չէր տա իմանալով Գորյունին: Բանն այն է, որ այդ գլխի շարադրանքից հետևում է, որ Մաշտոցը կրոնավորի կյանքի է անցել Խոսրով թագավորի օրոք: Մինչդեռ, ըստ Մովսես Խորենացու հեղինակային շարադրանքի, Արշակ թագավորը հիվանդությունից մեռավ 389 թ., իսկ Խոսրովը Հայքի արևելյան մասում իշխել է մինչև 392 թ., այսինքն հինգ տարի:

Մի այլ տեղ պատմական ժամանակի նկարագիրը հավաստի դարձնելու համար խմբագիրը պետք է նշեր կայսեր և արքայից արքայի անունները: Կայսրը Արկադոս է: Նա հիվանդ էր և չէր կարող կարգավորել Հովհան Ռսկեբերանի շուրջ ծագած աղմուկը և հասարակական շփոթը: Իսկ արքայից արքան V դարի սկզբներին Հագվերտոն էր, ինչպես վկայում է Մովսես Խորենացին ԾԲ գլխի սկզբում: Մինչդեռ նշված է Վռամի անունը: Միայն գալիս է խմբագրից, ով պարտավոր չէր իմանալ ամեն ինչ, բայց չսխալվելու մղումով նա օգտվել է Խորենացուց և արքա հռչակել Վռամին, մանավանդ, որ վերջինս նույնպես ունեցել է Արկադոսին զուգահեռ կառավարման շրջան: Պարզվում է, որ ընդմիջարկող խմբագիրը Վռամի անունը վերցրել է Խորենացու նախորդ 51-րդ գլխի վերջին տողից. «Եւ Վռամշապուհ ունէր զաշխարհս մեր և ծառայէր երկոցունց թագաւորացն տալով հարկս. զմասինն Պարսից՝ Վռամայ, եւ զմասինն Յունաց՝ Արկադէայ» (III, ԾԱ): Անմիջապես սրան հաջորդող գլխի սկզբում ընդմիջարկող-խմբագիրը գրում է. *«Յայնմ ժամանակի հիւանդացեալ Արկադ եւ... շփոթեալ լինէր թագաւորութիւնն Յունաց, վասն որոյ Վռամ հրամայեաց Վռամշապիոյ մերում թագաւորի իջանել ի Մեջագետս»* (III, ԾԲ): և:

Ամենաակնառու հատվածը, որ լրիվ ի հայտ է բերում մինչ այդ գուսպ արտահայտված «հունական» միտումը, ԾԳ գլուխն է, որտեղ ի հայտ են գալիս մաշտոցապատումի հույն հերոսները, ում չգիտի Գորյունի Վարքը:

Միջագետքում ոչինչ չգտնելով Դանիելի մոտ՝ Մեսրոպը գնում է Եդեսիա, ում հեթանոս հույն ճարտասան Պղատոնի մոտ, ով, ճիշտ է, գործին չի օգնում, բայց ուղարկում է իր ուսուցիչ Եպիփանոսի մոտ, որ իբր քրիստոնեություն էր ընդունել և ապրում էր Սամոսում (ոչ թե Սամոսատում): Փյունիկե անցնելով՝ Մեսրոպը գնում է Սամոս, բայց արդեն վախճանված Եպիփանոսի փոխարեն գտնում է նրա աշակերտ Հռոփանոսին, սրանից էլ է անշահ մնում ու, ապավինելով աղոթքին, տառերը գտնում է տեսիլքում: Եվ նույն այդ Սամոսում էլ Հռոփանոսի հետ մշակում է գտած այբուբենը: Փաստորեն հույն գործիչների փոխարեն գործին օգնում են աղոթքը և տեսիլը, որոնք ընդունելի են նաև հունական էլիտայի կողմից, մանավանդ, որ այդ աստվածամուխ գործողությունը՝ գրերի գյուտը, տեղի է ունենում ոչ թե Եդեսիայում, այլ գուտ հունական Սամոսում:

Վերոբերյալ և այլ բազմաթիվ փաստարկներից բխող եզրահանգումը մեկն է. Խորենացու Պատմության մեջ եղած մաշտոցապատումը ներկայանում է որպես մի խմբագրական միասնական մտահղացման արդյունք:

Բնական է, որ Ղազար Փարպեցու “գուգահեռագրումի” մեջ Խորենացու Պատմությունը ներկայանում է միայն թագավորական առանցքի վրա հյուսված պատմաքաղաքական դրվագներով՝ առանց մաշտոցապատումի: Բայց VII դ. վերջին Խորենացու II խմբագրության կազմողը մի շարք աղբյուրների հետ օգտագործել է նաև Ղազար Փարպեցու “մաշտոցապատումը”, որը, ի տարբերություն Կորյունի, մի նոր հայացքով է ներկայացնում գրերի գյուտի պատմությունը, ըստ որի գլխավոր հերոսը ոչ թե Մաշտոցը, այլ կաթողիկոս Սահակն է՝ պատվիրատու մարզպանի պապը:

Խորենացու և Փարպեցու Պատմությունների մեջ բնագրային նմանությունները հանդիպում են միայն բովանդակապես նույնացող հատվածներում:

Առաջին իսկ հայացքից կարելի է նկատել, որ նույն թեմայի շուրջ Մ. Խորենացին շատ ավելի կարճ է խոսում, քան Ղազարը, բայց և Խորենացին ավելի շատ տեղեկություն է հաղորդում, քան Ղազարը:

№ 4 համադրումը վկայում է, որ Խորենացու տարբեր գլուխներում ցրված և ընդհատ-ընդհատ ներկայացված հատվածը Ղազարի մոտ շարադրված է հաջորդաբար, բավականին ինքնուրույն, Խորենացու համեմատ՝ պատմողաբար: Ո՞վ է ումից հետո գրել, ցրված բնագիրը հավաքողը, թե՞ հավաք բնագիրը ցրված ներկայացնողը: Պարզվեց, որ Խորենացու համադրվող հատվածի երեք մասերն էլ սկզբնական հեղինակային բնագրում եղել են իրար կից, և Ղազար Փարպեցին արձանագրել է այդ սկզբնական վիճակը՝ բարեբախտաբար, իր հերթին հաստատելով, որ Խորենացու պատմության մեջ մաշտոցապատումը հետագայի ընդմիջակում է (ինտերպոլացիա):

№ 8 բնագրային համադրումը հաստատում է, որ Ղազար Փարպեցին, իրոք, նյութն ընտրում է ըստ իր հերոսի վեհացման ծրագրի: Այդ է պատճառը, որ, եթե Խորենացու մոտ Սահակը հանձն չի առնում Արտաշես արքայի ամբաստանումը ապստամբելու խորհրդի մեջ, ապա Ղազարի մոտ Սահակը հանձն չի առնում ամբաստանելու արքային առհասարակ վատթարության մեջ, որովհետև ապստամբելու թեման շատ նուրբ էր՝ քննարկելու համար մեկենաս Վահանի ներկայությամբ, ով եղել է ապստամբության ղեկավար: Բայց և դրանով հանդերձ Ղազարի մոտ ստացվել է որոշ թերասություն, որովհետև հասկանալի չի, թե ինքը Արտաշեսի որ վատ կողմերը չգիտի, կամ ի՞նչ պատճառով է Տիգրանը նրան գահազրկում:

№ 10 բնագրային համադրումը օգնում է անառարկելի վերջակետ դնելու երկու հեղինակի համեմատական բնագրագիտական քննությանը:

Օտար կաթողիկոսներից հիասթափված՝ հայ նախարարները վերն ասվածի պես հավաքվում են Սահակի մոտ՝ համոզելու, որ վերադառնա իր աթոռին: Խորենացու մոտ Սահակը, բնական է, վերադարձել է հայրենիք Տիգրանից, իսկ որտեղի՞ց հայտնվեց Սահակը պատմիչ Ղազարի մոտ: Այս հարցին չի՞ սպասել կամ ուշադիր չի՞ եղել Ղազար Փարպեցին: Վերջին անգամ նա Սահակին թողել է Տիգրանում, և թույլ է տվել, որ ընթերցողները կարծեն, թե պարզևստրված իշխանների հետ նա էլ վերադարձավ Հայք: Այսպես, Խորենացու մոտ ամեն ինչ պատճառաբանված է, իսկ Ղազարի մոտ՝ լռության տր-

ված և աղավաղված: Այսպիսով, Խորենացու Պատմության III գիրքը աղբյուր է ծառայել Ղազար Փարպեցու Պատմության առաջին դրվագի համար:

ԳԼՈՒԽ 11. ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ ՄԱՇՏՈՑԱՊԱՏՈՒՄԸ՝ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թե Մ. Աբեղյանը, թե Ղազար Փարպեցու բնագրի հրատարակիչները և այլ մեկնիչներ համարել են, որ Ղ. Փարպեցու Պատմության մաշտոցապատումից պակասում է առնվազն երեք պարբերություն, այն է՝ Մաշտոցի միջազգետքյան առաքելությունը և գրերի գյուտը²⁹:

Սա հայ բնագրագիտության պատմության մեջ ամենահայտնի երևույթն է, երբ ունենք լրիվ, ամբողջական (բայց ո՛չ անաղարտ) բնագիր, ու այդ բնագիրը XVIII դ. գրչի, XIX դ. հրատարակչի և XX դ. մեկնիչի կողմից ընկալվում է իբրև պակասավոր:

Ըստ Ղազար Փարպեցու մաշտոցապատումի, թագավորի փառասիրությունը շոյելով՝ «վաղվաղակի ստիպով» Վահրիճ իշխանին դեսպան են ուղարկում լուրը հայտնած երանելի Հարել երեցի մոտ, վերջինս էլ իր հերթին «փութանակի» հասնում է իր մերձավոր, բարեպաշտ, (ո՛չ եղեսացի, ո՛չ ասորի - Ա. Ս.) սքանչելի եպիսկոպոս Դանիելի մոտ, որից առնելով նշանագրերը՝ բերում է արքունիք:

Բայց հայերեն այբուբենը ոչինչ չարժե, եթե դա չներդրվի դպրոցներում, իսկ դպրոցում չի կարող ներդրվել, մինչև հայերեն չթարգմանվի ս.Գիրքը: Իսկ ամենակարևոր և դժվար այդ գործը կարող է անել միմիայն Սահակ Պարթևը, ում էլ դիմում են ազգովի, խնդրելով, որ նա ստանձնի այդ գործը, որ մեծությամբ հիշեցնում է նրա նախապապի՝ Գրիգոր Լուսավորչի սխրանքը, «որ յանգիտութենէ ի ճշմարիտ աստուածգիտութիւն առաջնորդեաց աշխարհիս Հայոց» (էջ 38):

Ղազարի մաշտոցապատումի մեջ ոչ մի բնագրային խզում չկա: Պարզապես V դարի վերջում ունենք գրերի ստեղծման մի ուրույն պատմություն, որը էականորեն տարբեր է Կորյունից:

Խորենացու Պատմությունը աղբյուր է եղել Ղազարի համար, իսկ Ղազարի Պատմությունը աղբյուր է եղել Խորենացու Պատմության ընդմիջարկող-խմբագրի համար:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պատմության բնական պահանջը հայ հանրությոը բավարարել է բանավոր վեպով, որն ունեցել է սկզբնաբանական բնույթ և տեղական-տոհմաբանական ուղղվածություն:

²⁹Տե՛ս «Ղազար Փարպեցույ Պատմութիւն և թուղթ», Տփղիս, 1904, «Յառաջարան», Զ-Է, էջ 15, ծնթգր. 3, կամ՝ Ղազար Փարպեցի, Հայոց Պատմություն, Թուղթ Վահան Մամիկոնյանին, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուբաբյանի, Երևան, 1982, էջ 32-34, ծնթգր. 11, ինչպես նաև Գ. Տեր Մկրտչյան, Արարատ, 1901, թ. 11-12, էջ 15:

2. Վիպական ավանդույթում պահպանված ամենավաղ բանավոր պատմություններն են՝ «Սասնա ծռերի» առաջին ճյուղը (մ.թ.ա. VI-V դդ.), որն ունի իրական պատմական հիմք, Հայկ Նահապետի և Հայկյանների վեպը (մ.թ.ա. V-III դդ.), որն ունի անիրական հիմք՝ առաջին մասով, պատմական հիմք՝ վերջին մասով (Տիգրան Երվանդյան):
3. Բանավոր վիպական աղբյուրի հիման վրա Խորենացու միջոցով մեզ հասած առաջին գրավոր պատմությունը՝ նվիրված Անիի Մայր մեհյանի Հիմնարկեքին, հունարենով շարադրել է Օղյունսյ քուրմը (II դ.):
4. Բանավոր վիպական ավանդույթի առաջին հունարեն գրառման ու նրա հիմքի վրա առաջին պատմագրական երկի (Հիսուսմն պատմութեան պիտոյից) ստեղծողը Մարաբ Մծուրնացին է (մ.թ.ա. II դ. վերջին քառորդ):
5. Խորենացու Պատմության միջոցով պահպանված Տիգրան Երվանդյանի վեպի աղբյուրը նույնպես Մարաբ Մծուրնացին է:
6. Մարաբ Մծուրնացու հետ կապված որոշ թյուրընկալումներ ծագում են կամ նրա հայերեն թարգմանչից կամ Խորենացու մեկնաբանումից:
7. Պատմահայր Մովսես Խորենացին որոշ տեղերում ոչ միայն մեկնաբանել, այլև կրճատել ու փոփոխագրել է Մարաբ Մծուրնացուն, ով հայացքներով եվհեմերիստ էր, իսկ կրոնով՝ հեթանոս-արարչապաշտ:
8. Չնայած Խորենացին ծագումով Տարոնի Խոյարունքից էր, Սահակ իշխան Բագրատունին նրան է պատվիրել Մամիկոնյանների պատվերով գրված պատմությանը այլընտրանք ստեղծելու գործը (մոտ 478-480թթ):
9. Խորենացու Եռագիրք Պատմությունը նախապես մանրատված ու վերնագրված գլուխներ չունեք, և բաց էր հետագա ընդմիջարկումների առջո:
10. Եթե Սահակ Բագրատունու ընթերցումներով ու միջամտություններով զուգահեռվող Խորենացու շարադրանքը համարենք հեղինակային խմբագրություն, ապա երկրորդ խմբագրությունը ստեղծվել է VII-VIII դարերի սահմանին՝ Փիլոն Տիրակացու կողմից Արշարունիքի և Շիրակի տեր Ներսես Կամսարականի պատվերով:
11. Երրորդ խմբագրությունը, որ պատմության մանրամասն գլխակարգումն է, ստեղծվել է 9-10-րդ դարերի սահմանագլխին՝ հավանաբար կաթողիկոս-պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու պատվերով:
12. Պատմահայր Մովսես Խորենացու Պատմություն Հայոց երկը կարելի է հրատարակել՝ խմբագրական շերտերը տալով երեք տարբեր գույներով կամ տառատեսակներով:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿԿԱԾ ՀՈՂԿԱԾՆԵՐ

1. История Нунэ в армянской действительности, Всесоюзн. науч. конф. (Тезисы докладов), Тбилиси, 1981, с. 25-29.
2. Հացունյաց անվավեր պատմությունը և նրա բանավոր տարբերակները. ՊԲՀ, 1982, № 3, էջ 135-143:
3. Культ креста в контексте армянского народного христианства, Советская этнография, М. 1991. №2. с. 61-70.

4. Культурологическая концепция изучения источников истории обращения Грузии в христианство,- «Կանթեղ», Եր., 2001, էջ 166-167:
5. Сие крест Шушаник,- Археология, этнология и фольклористика Кавказа, (Международная конф., тезисы докладов), Тбилиси, 2004, с. 231-232.
6. Մաշտոցի անվ. Մատենադարանի Մաշտոցագիտական ուսումնասիրությունների արդյունքները, Մաշտոցագիտական հետազոտություններ Մատենադարանում,- Միջազգային գիտաժողով նվիրված գրերի գյուտի 1600 ամյակին, Եր., 2005, էջ 40-41:
7. Երվանդյան մայրաքաղաքի պաշտամունքային հիմնարկերի հայեցակարգը ըստ Մովսես Խորենացու, (Երվանդակերտ, Դրասխանակերտ, մ.թ.ա. III-II դդ.),- ՀՀ ԳԱԱ Զեկույցներ, Եր., 2005, N 3, (հ. 105), էջ 295-302:
8. Культурологический поиск утерянных столиц Древней Армении, - Армянский гуманитарный вестник, М., 2006, с. 91-96.
9. Astuac (Бор) - знак армянского христианского конфессионально-культурного контекста, Человек как слово, М., 2008, с. 185-190.
10. От мифологии ландшафта к историографии,- Арм. гуманитарный вестник, М., 2009, с. 117-123.
11. Պատմագրական պատվերը և բանավեճը Ե-Է դդ. Հայ պատմիչների երկերում,- Մատենադարան իհիմնադրման հիսնամյակին նվիրված գիտաժողովի թեզիսներ, «Նաիրի» հրատ., Եր., 2009, էջ 226-254:
12. Նոր դիտարկումներ ի լրումն Մովսես Խորենացու կենսագրության,- ՀՀ ԳԱԱ Զեկույցներ, Եր., 2009, N 3, (հ. 109), էջ 261-266:
13. Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» գլխակարգումը որպես բնագրի վերջին խմբագրություն,- «Լևոն Խաչիկյան-90», Եր., 2010, էջ 226-254:
14. Մծուրք մայրաքաղաքը և պատմիչ Մարաբ Մծուրնացին,- ՀՀ ԳԱԱ Զեկույցներ, հտ. 111, Եր., 2011, № 2, էջ 195-206:
15. Հայ միջնադարյան վանական բանահյուսություն, Տարեգիրք Զ, Եր., 2011, էջ 375-386:
16. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» III գրքի կառուցվածքը և Մաշտոցապատումի խնդիրը, - «Բանբեր Մատենադարանի», 19, Եր., 2012, էջ 45-63:
17. Մովսես Խորենացու Պատմությունը և Ղազար Փարպեցին, Տարեգիրք (ԵՊՀ աստվածաբանական ֆակուլտետ), Է, Եր., 2012, էջ 92-107:
18. Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» III գրքի գլխակարգը, Տարեգիրք (ԵՊՀ աստվածաբանական ֆակուլտետ), Է, Եր., 2012, էջ 108-114:
19. Մաշտոցապատումը Ղազար Փարպեցու «Հայոց Պատմության» մեջ,- ՀՀ ԳԱԱ «Զեկույցներ», հտ. 113, № 1, Եր., 2013, էջ 109-117:
20. Մարաբ Մծուրնացու պատմագրական երկը (մ.թ. II դ.), Տարեգիրք (ԵՊՀ աստվածաբանական ֆակուլտետ), Ը, Եր., 2013, էջ 113-123:
21. Մ. թ. II դ. պատմիչ Մարաբ Մծուրնացու աշխարհընկալման և աղբյուրաբանական մեթոդի մասին,- ՀՀ ԳԱԱ «Զեկույցներ», հտ. 114, № 1, Եր., 2014, էջ 76-83:
22. Մարաբ Մծուրնացին միջոն ըդ Աբյուդենուսի և Խորենացու,- ՀՀ ԳԱԱ Զեկույցներ, հտ. 114, Եր., 2014, № 2, էջ 171-178:
23. Սեբիոսականք, երկի հեղինակը, «Էջմիածին» ամսագիր, 2014, հունվար, էջ 49-57:

24. Սերիոսականք, երկի կառուցվածքը, «Էջմիածին» ամսագիր, 2014, փետրվար, էջ 21-29:
25. Սերիոսականք, «Էջմիածին» ամսագիր, 2014, հունիս, էջ 34-58:
26. Ժողովրդական քրիստոնեությունը միջնադարյան Հայաստանում, Եր., 2014, 374 էջ:

“ДРЕВНЕАРМЯНСКАЯ ЭПИЧЕСКАЯ ТРАДИЦИЯ И ИСТОРИОГРАФИЯ”

Диссертация на соискания доктора филологических наук
по специальности “Армянская классическая литература” – 10.01.01

Защита состоится 26 ноября 2014 года, в 14:30 на заседании специализированного совета ВАК 012, действующего при ЕГУ, по адресу Ереван, ул. Хачатура Абовяна 52/А, ЕГУ, корпус филологического факультета, аудитория 202.

РЕЗЮМЕ

Естественная нужда в Истории армянской общины удовлетворялась устным повествованием, которое имело этиологический характер и локально-племенное направление.

Самыми ранними устными рассказами, сохранившиеся в эпической традиции, являются первая ветвь “Сасна црер” (VI-V вв. до н. э.), которая имеет реальную историческую основу, повесть о Патриархе Айке и Айкидах (V-III вв. до н. э.), первая часть которого имеет неисторическую основу, вторая – историческую (Тигран Ервандян).

В дальнейшем история основания Сасуна была соединена с мифом о Митре и эпическими повествованиями Давида по принципу монтажа, составляя один целостный эпос XI-XII вв. А эпос Айка и Айкидов после своего окончательного формирования (III в. до н. э.) постепенно включает новые эпические мотивы и становится выразителем процесса национальной консолидации.

Фиксация отмеченных двух эпосов осуществил Мараб Мцурнаци в своем “Изложении истории полезных вещей”, которое он написал на греческом языке в последней четверти II в. н. э. в качестве царского секретаря столицы Мцурк по заказу царя Вагарша, почерпнув материал как из местного архива, так и из уст современников.

Книга Мараба была переведена на армянский язык, по всей видимости, во второй четверти V в. и в качестве источника была использована Павстосом Бузандом и Мовсесом Хоренаци. У последнего греческая форма “Марабас” была воспринята как ассирийский “Мар Абас Катипа” (“секретарь”, но с искажением – “Катина”), который, будто бы в III в. до н. э. был отправлен в Ниневию для того, чтобы пользоваться местным архивом. Хоренаци из книги Мараба заимствует материал выборочно и с редактировками, одновременно довольно высоко оценивая его как “мудрейшего из мудрых”. Поэтому иногда напрямую цитирует слова Мараба, создавая впечатление, что это слова его самого (“Несмотря на то, что мы не многочисленный народ...” и т. д.).

Книга Мараба была составлена из четырех частей, героями которых были Айк, Арам, Ара, Тигран. Об Арташесе же во II в. н. э. написал другой автор, старший современник Мараба, тоже писавший на греческом языке, вероятно армянин по

национальности, верховный жрец Главного Мехьяна (Храма) Ани Огюмп, который в своей “Храмовой истории” основание главного Мехьяна связывает с именем Артасеса Первого. Фактически, на основе устной эпической традиции Огюмп написал историю одного отдельного эпизода, Мараб же написал целостную историю, а эти две дошли до нас посредничеством Мовсеса Хоренци, в качестве письменных источников последнего.

Важно отметить, что источником эпоса Тиграна Ервандяна, сохранный в Истории Хоренаци, является Мараб Мцурнаци. Только некоторые неразумения связываются или с армянским переводчиком, или с толкованием Хоренаци. Отец армянской историографии Мовсес Хоренаци в некоторых случаях не только толкует, но и сокращает и перефразирует Мараба Мцурнаци, который по убеждениям был евгемеристом, а по верованию язычником, почитателем Бога-Творца. Несмотря на то, что Хоренаци происходил из Таронского Хоярунка, князь Саак Баградуни заказал ему создать альтернативную историю наряду с историей Бузанда, заказанной Мамиконянами.

На рубеже VII-VIII вв., когда по заказу ширакского князя Нерсеса Камсаракана Филон Тиракаци переводит “Церковную историю” Сократа Схоластика (Большой Сократ) и одновременно составляет сокращенный вариант этой Истории (Малый Сократ), а потом в конце первого и в начале второго включает “Житие” Сильвестра, из которых ряд дословных заимствований Филон Тиракаци вносит в новую редакцию “Истории” Мовсеса Хоренаци. В результате получается, что Большой Сократ служит источником для Малого Сократа и Хоренаци. Малый Сократ становится источником только для Хоренаци, а “История” Хоренаци служит источником только для Малого Сократа.

Если иметь в виду, что некоторые текстовые детали не встречаются в Большом Сократе, но встречаются в Маленьком и в греческом подлиннике Большого Сократа, а также есть общие детали между греческим подлинником Большого Сократа и известной интерполяцией в “Истории” Мовсеса Хоренаци (имена участников Вселенского Собора), то следует заключить, что довольно сложные текстовые взаимоотношения диктуются переводчиком-редактором Филоном Тиракаци.

Заказ новой редакции рождается в контексте политических и правовых программ Нерсеса Камсаракана.

А на рубеже IX-X вв. “История” Мовсеса Хоренаци подвергается еще одного последнего вмешательства: на этот раз в делении “Истории” на главы и оглавления. Предполагается, что эта редакция была создана по заказу патриарха-историка Ованнеса Драсханакертци, когда последний писал свою “Историю Армении”, с целью облегчения в применении “Истории” Хоренаци и предотвращения ее дальнейших интерполяций.

THE OLD ARMENIAN EPIC TRADITION AND HISTORIOGRAPHY

SUMMARY

The Armenian community has met the 'natural demand of history' through verbal epics that have been original and have been place-oriented and family-oriented. Among the earliest verbal epics are the first branch of "Sasna Tsrer" (6th-5th centuries B.C.) based on a true story, and the epic of Hayk Nahapet and the Haykyans (5th-3rd centuries B.C.), which is unreal in the first part and is based on a true story in the last part (Tigran Yervandyan).

The first written story devoted to the foundation of the Main Mehyan of Ani and made available to us through Khorenatsi on the basis of a source of verbal epics was composed in Greek by Priest Oghyump (2nd century). Marab Mtsurnatsi (last quarter of the 2nd century B.C.) is the first person who recorded the tradition of verbal epics in Greek and is the person who created the first historiographical work (Hiusumn Patmutyan Pitoyits) based on that.

Later, in the XI-XII cc., the history of the foundation of Sasoun was combined with the legend of Mihr and the historical epics of Davit forming one complete epic. As for the novel of Hayk and Haykids after the complete formation (IIIc. B.C.) started to involve the later scenes and had become the expression of the process of national consolidation.

The registration of the mentioned epics was done by the Marab Mtsurnatzi in his *Composition on Necessary Things* which was written in Greek in the II c. B.C. on the order of King Vagharsh as royal scribe in Mzork capital, retrieving materials from the local library. The manuscript by Marab, probably, was translated into Armenian in the second quarter of the V century and which as a source was used by Paphstos Byuzand and Movses Khorenatzi. The latter the Greek version of Marabas comprehended as assiric Mar Abas Katipa (scribe, deteriorated as Katina) who was sent to Ninveh in the III c. B.C. to make use of the local library. Khorenatzi used sources from the Marab's msnuscript selectively and editorially evaluating him as the wisest of wisest. For that reason he speaks with the words of Marab as if they are his words. The marab manuscript consists of four parts the heroes of which were Hayk, Aram, Ara, Tigran. But about Artashes wrote another contemporary of Marab (II c. B.C.), who might have been Armeniuan by nationality, and wrote in Greek as well. His name was Olimp and he was the the priest in Ani Temple. He in his *Templc History* mentions the fact that the base was blessed by King Artashes. In fact, Olimp wrote another separate history based on oral epic source. Marab wrote the complete history but we got the two of them via M. Khorenatzi.

Marab Mtsurnatsi is also the source of Tigran Yervandyan's epic that has been preserved through the history written by Khorenatsi. Some misunderstandings related to Marab Mtsurnatsi are due to either the Armenian translator or Khorenatsi's interpretation. In some places the "father of Armenian history" Movses Khorenatsi not only interpreted, but also made changes and shortened the work of Marab Mtsurnatsi, whose views were Euhemeristic and pagan and a worshipper of God as Creator. Although Khorenatsi was originally from the Khoyaronk of Taron, Prince Sahak Bagratuni had ordered him to create an alternative to the history written by the order of the Mamikonyans (circa 478-480).

Khorenatsi's History Trilogy was not initially detailed and did not have chapters with titles, and was open to interventions at a later stage.

If we consider the process of the composition of Khorenatsi's history, as paralleled by Sahak Bagratuni's readings of it and interventions in it, as an instance of authorized redaction, then the second redaction was created circa the 7th-8th centuries by Pilon Tirakatsi by the order of the lord of Arsharunik and Shirak, Nerses Kamsarakan. Pilon Tirakatsi, after translating the Ecclesiastical History of Socrates Scholastikos, also creates an abridged version of that text, namely its shorter version, subsequently interpolating it into Khorenatsi's history, creating a new redaction of Khorenatsi. In fact, due to the efforts of one and the same person, the new redaction of Khorenatsi has become dependant upon the two versions of Socrates, while the shorter Socrates is dependant upon the full text of Socrates as well as its shorter version.

The third redaction, which consisted of the division of the work into chapters and the assignment of chapter headings of the history, was made around the turn of 9th-10th centuries and probably by the order of Catholicos-historian Hovhannes Draskhanakertsi.

The work entitled "History of the Armenians" by the "father of Armenian history" Movses Khorenatsi can be published by highlighting the three different editorial layers through different colors or different fonts, because the every editorial layer was written not on the account of but in addition to the previous one.